

ՊԱՆՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1879 ԱՄԻՆ  
ՆԻՍՏ Թ.

24 ՕԳՈՍՏՈՍ 1879



Կ. ՊՕԼԵՍ

1879

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ, Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅՍՏԱՆԵԱՅՑ

ԹԹ Գուճ-Գաբու, Պատրիարքարանի փողոց ԹԹ

**ԴԻԻԱՆՔ ԱՋԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ**

ՄԱՅԲ ԴԻԻԱՆ

Ստեփան ֆաշա Ասլանեան	Ա. Արեւապետ
Տիգրան էֆէնտի Եւսուֆեան	Բ. »
Յարութիւն էֆէնտի Մէրեէմ-Գուլի	Գ. »
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան	Ա. Արեւապետ
Գասպար էֆէնտի Չէրազ	Բ. »
Գարեգին էֆէնտի Մելիքեան	Գ. »

Ձեռնաստրեան դիւան

Յարաբերութեան դիւան

Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ  
Յովհաննէս Քահանայ Մկրեան  
Տիգրան էֆէնտի Եւսուֆեան

Մկրտիչ էֆէնտի Էսաեան  
Բարսեղ էֆէնտի Հալաճեան  
Պօղոս էֆէնտի Պառնասեան

Գաստրալիութեան դիւան

Իրաւաստրեան դիւան

Սէրփիլէն էֆէնտի Արեւապետ  
Ռէթեոս էֆէնտի Պէրպէրեան  
Գասպար էֆէնտի Չէրազ

Ներսէս փարգապետ Ասլանեան  
Առաքել էֆէնտի Ալթուն-Տիւրքի  
Նշան էֆէնտի Օտեան

Կարուածոց դիւան

Նախանձեռութեան դիւան

Մինաս էֆէնտի Գափամաճեան  
Յովհաննէս էֆէնտի Կրճիկեան  
Արիկ էֆէնտի Ունճեան Արեւապետ

Տարթուս Ռափայէլեան էֆէնտի  
Յարութիւն էֆ. Մէրեէմ-Գուլի Արեւապետ  
Միհրան էֆէնտի Չօղանեան

Համալսակալութեան դիւան

Խմբագրութեան դիւան

Ստեփան էֆէնտի Փափաղեան  
Քրիստոստուր էֆ. Ղազարտեան Արեւապետ  
Համբարձում էֆէնտի Մազսուլեան

Կարապետ էֆ. Խլիւնեան Արեւապետ  
Գարեգին էֆէնտի Մելիքեան  
Համբարձում էֆէնտի Ալաճաճեան

Ելմտական յանձնախումբ

Քրիստոստուր էֆէնտի Ղազարտեան  
Ղազար էֆէնտի Հօլուեան

Սարգիս էֆէնտի Գալուսճեան  
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան

**Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ժ Ո Ղ Ո Վ**

ԲԱՅՈՒՄ 1879 ԱՄԻՆ

Ն Ի Ս Տ Թ.

24 ՕԴՈՍՏՈՍ 1879

ՆԱԽԱԳԱՀ. — Ամեն Տ. Ներսէս Սրբազան Պատրիարք

ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան էֆէնտի Եւսուֆեան (դեր-Ատենապետ)

**ԱՋԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ**

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	ԵՐԵՍՓՈՒԱՆՔ (Ա. Վ. ԻճԱԿ)	ԳՐԱՎԱՐՈՒ, ԿԵՒԻԿ ՎԱՅԱ ԵՎ ԳՐԱՎԱՐՈՒ ԴՈՒՐՍ	ԵՐԵՍՓՈՒԱՆՔ
Ա. Վ. ԻճԱԿ	Գրումգարու, Կեուիկ վաշա	Եւ Գրումգարուի դուրս	Իւսկիւտար Ս. Կարապետ
1 Կարապետ Եսու. Սերոբեան	21 Գրիգոր Պէրպէրեան	Բ 2	49 Միհրան Պահճէգափուլեան Բ
2 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ. Պ	22 Գէորգ Ստիմարաճեան		50 Պօղոս Թորոզումեան
3	23 Խաչիկ Մանկասարեան	Բ Պ	51 Նիկողոս Ալաճաճեան Բ
4	24 Կարապետ Աղարդաճեան Բ		52 Տրդատ Փափաղեան Բ
Բ. Վ. ԻճԱԿ	25 Համբարձում Մազսուլեան		( Գ. Վ. ԻճԱԿ )
5 Մատթէոս Եսու. Իգմիրլեան	26 Մինաս Գափամաճեան		Գասքմ բաշա
6 Պօղոս Վ. Խօլտամեան	27 Յովհաննէս Պօլաճեան	Բ Պ	53 Գասպար Չէրազ Բ
7 Յովհաննէս Ք. Մկրեան	28 Ն. Մէղալուրեան Տօքթօր	Բ 2	Բերա
8 Գրիգոր » Աճէմեան	29 Պօղոս Պառնասեան		54 Արիկ Ունճեան Բ
Գ. Վ. ԻճԱԿ	30 Սարգիս Աղարէկեան	Բ Պ	55 Գրիգոր Սէլիմիէճեան Բ Պ
9 Վահան Վ. Տ. Մինասեան Բ Պ	31 Սահակ Ապրօ	Բ Պ	56 Գրիգոր Օտեան Բ
10 Յակոբ » Ա. Փափաղեան	32 Սենեքերիմ Մանուկեան	Բ 2	57 Սէրփիլէն Բ
11 Սահակ Ք. Տ. Սարգսեան Բ	33 Բարթող Քիւրքճիպաշեան Բ		58 Ռափայէլեան Տօքթօր
12 Խորէն » Փէշիվանեան Բ	34 Ատովմ Տէրպէնց	Բ	59 Միքայէլ Մօմճեան Բ
Գ. Վ. ԻճԱԿ	35 Գէորգ Ապտուլաճեան		60 Կարապետ Քաղաղեան
13 Ներսէս Վ. Ասլանեան Բ	36 Յ. Մէրեէմ-Գուլի		61
14 Սուքրաս Ք. Ստեփանեան	37 Աւետիս Կիրտաղեան		62
15 Յարութիւն Սերոբեան	( Բ. Վ. ԻճԱԿ )		Միշազիւղ
16	Պէշիկբաշ		63 Յակոբ Նորատուեկեան Բ
Ե. Վ. ԻճԱԿ	38 Անդրանիկ Կրճիկեան	Բ 2	64 Տիգրան Եւսուֆեան
17 Խորէն Արքե. Նար Պէյ Բ	39 Ալիքսան Խօրասանճեան	Բ	65 Մկրտիչ Գաղանճեան Բ
18 Յովհաննէս Վ. Փափաղեան	40 Բարսեղ Հալաճեան		66 Աւետիս Գօլուեան
19 Խորէն » Կիւրոյեանց Բ Պ	Եկեղիզարու.		67 Նշան Օտեան
20 Գարեգին » Թաթարեան Բ	41 Մկրտիչ Քիւրքճիխանլեան		Պէյգօգ Եւ Ղալաքիս
Բ. Բացակայութիւն առաջին :	42 Սեպուհ Մազսուլեան	Բ	68
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ :	43		( Գ. Վ. ԻճԱԿ )
Բ. Պ Բացակայ բանաւոր սլատճառ :	44		Ղուզղունճուք Եւ Իճատիէ
	Իւսկիւտար Ս. Խաչ		69 Յովհաննէս Էսաեան Բ
	45 Միմոն Յէլէկեան	Բ	70 Ստեփան Պէշիկճեան
	46 Ստեփան Ասլանեան	Բ Պ	

Գատրգիւղ	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Կարապետ Շահապազեան Բ 2	Կարին	121 Ստեփան փոփազեան
72 Մկրտիչ Մուրատեան Բ	101 Սիմոն Մազսուտեան Բ 2	Տիվրիկ
Նարլըգաբու.	Քեօթանեա	122 Նշան Գարագաշ Բ
73 Յակոբ Եէմէնիճեան	102 Մ. Փոփազեան Տօթօր	Զէյբուն Է. Մարաշ
Եեհիմանայի Ե. Սամարիոյ	Աղբիանուպօլիս	123
74 Պօղոս Մկրտիչեան Բ	103 Վիչէն Ապուստոլաճ Բ	Տրապիզօն
Թօփգափու.	Նիկոմիդիա	124 Տիգրան Տ. Ներսէսեան Բ 2
75 Յովհաննէս Մարգարեան	104 Կ. Ս. Իւթիւճեան	Պաղտատ
Էյուպ Ս. Եղիա Է. Ս.	Ակն	125 Մելքօն Իսկէնտէրեան Բ 2
Աստուածածին	105 Աւետիս Պարոնեան	Տիգրանակերտ
76 Գարեգին Յ. Մէլիքեան Բ	Ղարանխար	126 Միհրան Զօպանեան
Գուրուչեյմէ	106	Վան
77 Աստիա Իկիտպաշեան Բ Պ	Արաբկեր	127
Հիսար Է. Պօյաճի գիւղ	107 Կարապետ Խաչիկեան	Ադրամար
78	Բաղէշ	128
Նոր գիւղ Է. Սբէնիա	108	Հայեպ Է. Այնքապ
79 Ղազար Հովուեան Բ	Պրուսա	129
Պալատ	109 Քրիստոստուր Ղազարոսեան	Սեբաստիա
80 Մկրտիչ Գ. Էսսեան	Ենդոկիա	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
81 Յովհաննէս Կրճիկեան Բ 2	110	Ռուսճուխ
82	Ամասիա	131
Քարակեօմրիակ	111 Համբարձում Ալաճաճեան Բ 2	Կարս
83 Սեպուհ Թիւրապեան Բ 2	Բայու.	132 Արրահամ Յ. Այվազեան
84	112 Յովհաննէս Ազնաւորեան Բ	Զմշկածագ
( Ե. Վիճակ )	Եղեսիա	133 Համբարձում Սարըբէշիճեան
Սամարիա	113 Յակոբ Իւթիւճեան	Գաղատիա
75 Ալիքսան Պէշիքեան Բ	Մանճըլլիս	134
88 Եղիազար Մէլիքեան Բ 2	114	Ատանա
86 Մինաս Ճաֆճաֆեան Բ	Հաճըն	135
88 Նազարէթ Շահապազեան Բ 2	115	Սըղերդ
89 Յարութիւն Թիւրեան	Երզնկա	136 Մատթէոս Ալէքսան Բ
90 Յակոբ Արշակ	116 Ռէթէոս Պէրպէրեան	Եօզղատ
91	Թերիքտաղ	137 Լօղօֆէթ Պալեօզեան Բ
92	117 Տիգրան Գ. Սինանեան Բ	Մալարիա
93	Կեսարիա	138 Գէորգ Վարդանեան Բ
94	118 Գէորգ Գըլըճեան	Իզմիր
Խասգիւղ	Խարբերդ	139 Պապի Պապօեան
95 Առաքել Ալթուն Տիւրքի Բ 2	119	Եգիպտոս
96 Ռէթէոս Պէշիկճեան	Պալքրեսեր	140
97 Սարգիս Արրահամեան Բ 2		
98 Մ. Արծրունի Տօթօր		
99 Սարգիս Փափուքճեան Բ 2		
100 Աթանազիոս Արապեան Բ 2		

# Օ Ր Ե Կ Ե Ր Գ

Ա. — Խնդիր Աղղային ուղղակի տրոց . — Շարունակութիւն վիճարանութեան ի վերայ Համարակալութեան դիւանի տեղեկագրոյն :

Բ. — Խնդիր վերաքննութեան Սահմանադրութեան . — վիճարանութիւն ի վերայ Նախաձեռնութեան դիւանի տեղեկագրոյն :

Գ. — Խնդիր Ղալաթիոյ թաղեցւոց . վիճարանութիւն ի վերայ տեղեկագրոյն Մայր Դիւանի :

## ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ընդ նախագահութեամբ Ամենապատիւ Տ. Ներսէս Արքազան Պատրիարք Հօր՝ եւ ատենապետութեամբ Տիգրան Էֆէնտի Եուսուֆեան Ատեանը բացուեցաւ ժամ 7 1/2 ին ի ներկայութեան 39 Երեսփոխանաց, որոց թիւը 49 ի յանգեցաւ ի վերջէ :

տպեալ հաղորդուած է արդէն Երեսփոխանաց, ժողովոյն դիտողութեան ենթարկեց զայն :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Երես 185, սիւնակ Ա. տրոց կանոնագրին 10րդ. յօդուածին նկատմամբ իմ մէկ առաջարկութիւնս կայ արձանագրեալ, յորում ի մէջ այլոց՝ զայս եւս ըսած էի թէ քուէ տալու իրաւունքը գործադրել ուղղը՝ պէտք է նաեւ որ վճարած լինի իւր տուրքը : Այս կէտը պակաս կը դանեմ, եւ կամբողջացնեմ այժմ :

1. Խնդիր վաւերացման նախընթաց Ը. Նիստի ատենագրութեան

Ատենապետ Էֆէնտին յայտարարելով թէ ժողովոյ նախորդ Ը. նիստի ատենագրութիւնն

ՄԷՐԵԿԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Պահմանադրութեան ինձ ատենագրութիւնն եւ ես միջոց չունեցայ դեռ եւս զայն կարդալու : Այս դիտողութիւնն ընկելով դիտաւորութիւնն չունիմ ընաւզանդատիլ դիւանին դէմ, զի անտեղեակ չեմ գործին դժուարութեանցը, եւ գիտեմ արդէն որ թէ Ատենապետը Էֆէնտին եւ թէ ժողո-

վիս Գիւանադպրը որքան մեծ աշխատութիւն կը կրեն ատենագրութեանց խմբագրութեան եւ տպագրութեանը համար . բայց ըստ որում զեռ չընթերցայ, չեմ կարող գիտնալ թէ զիտողութիւն մ'ունիմ ընելիք, թէ ոչ . ուստի կառաջարկեմ որ այս ատենագրութեան վաւերացումը յառաջիկայ նիստին մնայ :

ԻԻԹԻՒՃԵԱՆ Յ. ԷՖ. — Այո, այո :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ Մէրեէմ-Գուլի էֆէնտի առաջարկն, եւ ժողովը՝ 4 քուէի ընդդէմ՝ 8 քուէով կը Ն-ԳՈՒՆԻ զայն, եւ յառաջիկայ նիստին կը վերապահէ ատենագրութեան վաւերացումն :

2.

Բացակայութիւն երեսփոխանաց

Երեսփոխաններէն

- 1. Ստեփան փաշա Աւանեան
- 2. Սիմօն պէյ Մաքսուտեան

գրով ծանուցած լինելով թէ անձնական տկարութեան պատճառաւ հարկադրեալ են այսօրեայ նիստէն բացակայ մնալ, Ատենապետ էֆէնտին անոնց անունը յիշատակեց եւ բացակայութիւնն իրր օրինաւոր արձանագրել տրուաւ ներկայութեան տուժարին մէջ :

3.

Երեսփոխան Ալաճաճեան ԷՖէնտի հրաժարականը

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս նախորդ նիստին մէջ, Գիւանն յայտարարած է ժողովից, մեր ընկերներէն Ալաճաճեան էֆէնտին չուզեր

ժողովոյ կոչնագրերն ընդունիլ, առարկելով թէ ինք հրաժարած է պաշտօնէ, եւ այլ եւս աւելորդ զինքն ի ժողով հրաւիրել : Եւ արդարեւ Ալաճաճեան էֆէնտին ժողովոյ վերջին դռնփակ նիստին մէջ բողոքանօք հրաժարած է բերանացի յայտարարութեամբ, բայց ըստ որում ժողովն նոյն օրն անոր հրաժարականին նկատմամբ անօրէնութիւն մը չէ ըրած, Գիւանն զայն միշտ իբր երեսփոխան նկատելով ստիպուած է կոչնագիր ուղղել ժողովոյ նիստերուն ներկայ զրուուելու համար : Այս հրաժարականի խնդիրն պէտք է լուծուի մ'ընդունի, եւ անցեալ նիստին երբ գիւանը զայն ներկայեց ձեզ, այսօրեայ նիստին վերապահեցիք, ուստի կը հրաւիրեմ զձեզ որ հաճիք ձեր կարծիքը յայտնել, եւ որոշել խնդիրը :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ալաճաճեան էֆէնտի նկատմամբ ցաւալի թիւրիմացութիւն մը տեղի ունեցած է : Ինք ժողովոյ վերջին դռնփակ նիստին մէջ՝ քուէարկութեան փորձի մը պահուն՝ մեկնեցաւ ժողովէն, եւ այլ եւս երեսփոխան չեմ ըսելով : Այս պարագային մէջ հարկ էր անշուշտ իւր հրաժարականը քուէի դնել, սակայն փոխանակ այսպէս ըլլալով՝ յանդիմանութեան քուէ տրուեցաւ անոր : Այս տեսակ պատիժ մ'երեսփոխանի մը կրնար տրուիլ, եւ ոչ թէ անոր՝ որ պաշտօնէն կը հրաժարէր, ուստի այս քուէն պարզապէս թիւրիմացութեան մ'արդիւնք էր : Արդ՝ քանի որ Ալաճաճեան էֆէնտի հրաժարականը զեռ եւս ժողովին կողմէ ընդունուած կամ մերժուած չէ, կառաջարկեմ այժմ քուէի դնել զայն, եւ վերջացնել խնդիրը :

ՄԷՐԵՇԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ես չկրցի աղէկ ըմբռնել այս առաջարկին իմաստը : Երբ Ալաճաճեան էֆէնտի հրաժարականը խնդրոյ նիւթ ըլլայ եւ քուէի դրուի, իւր արժանիքը ճանչցողները չի պիտի ուզեն ի հարկէ անոր հրաժարումն, եւ իրենց քուէն պիտի տան զայն մերժելու համար : Բայց միթէ Ալաճաճեան էֆէնտին պիտի համակերպի՞ այսպիսի որոշման մը, եւ պիտի շարունակէ՞ իւր պաշ-

տօնն : Եթէ՞ ինչպէս ըրեր է ցարդ՝ շարունակէ նա դարձեալ չընդունիլ երեսփոխանի տիտղոսով իրեն յուղարկուած պաշտօնական գրերն, ինչ կէք պիտի առնու այն ատեն խնդիրն : Այս՝ այնպիսի կէտ մ'է՞ որ պէտք է նախապէս պարզել : Ուստի բանաւոր միջոց կը թուի ինձ՝ հրաւիրել նորէն Ալաճաճեան էֆէնտին գիւանին միջոցաւ, որ իւր հրաժարականը գրով մատուցանել բարեհաճի, եթէ հրաժարեալ կը համարի զինքն երեսփոխանութենէ, եւ յետոյ խնդիրը ժողովիս անօրէնութեան ենթարկել :

ՊԷՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Ալաճաճեան էֆէնտի բացակայութեան պատճառն իւր հրաժարեալ ըլլալն է : Գիտենք որ վերջին դռնփակ նիստին մէջ Ալաճաճեան էֆէնտին յայտարարեց թէ կը հրաժարի երեսփոխանութենէ եւ մեկնեցաւ խորհրդարանէն : Ժողովը՝ անոր բացակայութեան՝ յանդիմանութեան քուէ տուաւ անոր դէմ, մի հրաժարեալ երեսփոխանի դէմ :

Այսօր ալ զինքը հրաժարեալ չենք ուզեր նկատել, որ թերեւս կարենանք իբր պարտազանց հրաժարեցնել զայն, որ ինքնին հրաժարած է : Ես առիթ ունեցայ տեսնուելու Ալաճաճեան էֆէնտի հետ, որ ըսաւ ինձ թէ ինք կը պնդէ իւր հրաժարականին վրայ, եւ թէ՛ այս պատճառաւ չընդունիր իրեն զրկուած հրաւիրագրերն, ինչպէս ամեն անգամ կրկնել է նաեւ բարապանին, եւ ոչ թէ Ազգ. ժողովոյ հրաւերն արհամարհելու համար : Ալաճաճեան էֆէնտին ցարդ այնքան ուղղութեամբ եւ այնքան անկեղծութեամբ ծառայած է ազգին թէ իբր երեսփոխան, եւ թէ իբր խմբագրապետ, եւ այսօր կրկնապէս անիրաւ կը լինէինք իրեն դէմ եթէ ուզէինք իբր բացակայ պարտազանց հրատարակել զինքը : Ուստի ձայնակցելով Քափամաճեան էֆէնտի կառաջարկեմ որ իւր հրաժարականը խնդրոյ նիւթ լինի եւ քուէի դրուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս տեղեկութիւններէն այնպէս կը հասկըցուի որ Ալաճաճեան էֆէնտին՝ որ հրաժարելով մեկնած էր ժողո-

վէն, կը պնդէ միշտ իւր հրաժարականին վրայ եւ երկու երեսփոխանք կառաջարկեն զայն քուէի դնել, բայց հրաժարականին ընդունելութեանը կամ մերժման վրայ կը լռեն :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Այս կէտը քուէն պիտի որոշէ :

ՄԷՐԵՇԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Այնպէս կը հասկըցուի Պէրպէրեան էֆէնտի տուած բացատրութենէն թէ՛ կրնանք վստահ ըլլալ որ Ալաճաճեան էֆէնտին պիտի համակերպի ժողովին որոշման, երբ իւր հրաժարականը խնդրոյ նիւթ ըլլայ եւ քուէի դրուի : Եթէ այսպէս է, դժուարութիւն չմնար մեր առջեւ :

ՊԷՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Իմ խօսքերս այդպիսի հետեւութիւն մը չունին, մեր պահանջումը սա է պարզապէս որ ինչ ատենական գործողութիւն որ տեղի կունենայ հրաժարման պարագաներու մէջ, պէտք է կատարուի նաեւ այս խնդրոյն մէջ, այսինքն քուէի դրուի Ալաճաճեան էֆէնտի հրաժարականը :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես Ալաճաճեան էֆէնտի հետ տեսնուած չեմ, եւ չգիտեմ թէ երբ իւր հրաժարականը մերժուի, պիտի համակերպի թէ ոչ՝ ժողովին որոշմանն, այլ միայն կանոնին գործադրութիւնը կը պահանջեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Որ եւ է երեսփոխան ազատ է հրաժարելու իւր պաշտօնէն . հրաժարական մ'երկու ձեւով կրնայ ըլլալ, մին պարզ եւ միւսը պատճառարանեալ : Ես ներկայ չէի այն նիստին, ուր Ալաճաճեան էֆէնտին հրաժարեւ է, բայց սա յայտնի է որ բողոքանօք հրաժարական տուեր է բերանացի, եւ մեկնել է նիստէն, իսկ ժողովն յանդիմանութեան քուէ տուեր է Ալաճաճեան էֆէնտի, առանց իւր հրաժարականը նկատողութեան առնելու եւ որոշում մը տալու : Ալաճաճեան էֆէնտին նոյն նիստէն ի վեր կը շարունակէ բացակայ մնալ ժողովէն, եւ իւր

մէկ պաշտօնակցին միջոցաւ կը յայտարարէ որ եթէ ինք չբանար իրեն ուղղուած գրերը, ժողովը նախատեսու գիտաւորութեամբ չէ, այլ վասն զի երեսփոխան չէ, անոր համար չուզեր ընդունիլ: Ըսել է Ալաճաճեան էֆէնտին կը պնդէ միշտ իւր հրաժարականին վրայ: Հիմա ժողովին կը մնայ որոշել թէ այս հրաժարականը կընդունի՞ թէ՛ ոչ, կարծեմ այս կէտին վրայ է խնդիրը:

ՄԵՐԵԿԻՄ-ԳՈՒԼԻՅ՝ ԷՖ. — Հասկըցայ, խնդիրն Ատենապետ էֆէնտին տեսակէտով թերեւս աւելի աղէկ պիտի պարզուի: Ալաճաճեան էֆէնտին կամ անկեղծօրէն հրաժարած է, կամ ոչ, այս կէտն անստոյգ մնացած է. վասն զի Ալաճաճեան էֆէնտի քաջ գիտէ անուշտ որ հրաժարականը գրով կը մատուցուի, բայց ինքն այդպէս չէ ըրած, այլ յուզմամբ եւ բարկութեամբ մեկնած է ժողովարանէն, « ես կը հրաժարիմ » ըսելով: Մարդարէ ըլլալու է մարդ այս կերպիւ տրուած հրաժարականի մ'անկեղծ ըլլալ կամ չըլլալն հասկընալու համար: Ես այն օրը ներկայ էի, եւ Ալաճաճեան էֆէնտին այնչափ այլ յայտէ եղած տեսայ, որ չեմ կարծեր թէ ինքն իւր անձին տէրն եղած ըլլար նոյն պահուն, եւ իւր հրաժարականը համոզմամբ մատուցած: Այս պատճառաւ էր որ անոր հրաժարականը քուէի գնելու առաջարկութեան առթիւ կը դիտէի քիչ մ'առաջ թէ, երբ հրաժարականը չընդունուի ժողովէս, բայց Ալաճաճեան էֆէնտի յամառի մնալ իւր արդի դիրքին մէջ, ինչ ելք կրնայ առնուլ խնդիրը: Հակառակ տեսութեամբ ալ անսովոր կը թուէր ինձ, առանց հրաժարագիր մ'ունենալու մեր առջեւ, հրաժարական քուէարկել: Այսու ամենայնիւ կը տեսնեմ որ այս ձեւով ալ խնդիրն օրինաւոր ճամբուն մէջ պիտի մտնէ, երբ ժողովը մերժէ Ալաճաճեան էֆէնտի հրաժարականը. վասն զի յայնժամ հրաւեր պիտի ուղղուի իրեն յատկապէս գալ իւր պաշտօնը շարունակելու, եւ Ալաճաճեան էֆէնտին, եթէ անկեղծ էր իւր հրաժարականը, քաղաքապարտութեան դէմ չմեղանչելու համար պիտի պարտաւորի բնականաբար գրով կրկնել զայն, եւ

ժողովս պիտի կարենայ իւր վերջնական որոշումն ընել ըստ օրինի: Իսկ եթէ վայրկենական տպաւորութեան ներքեւ կամ մասնաւոր դիտմամբ հրաժարած է Ալաճաճեան էֆէնտին, հաւանականաբար պիտի համակերպի ժողովիս որոշման եւ ըստ այնմ պիտի շարունակէ իւր պաշտօնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ալաճաճեան էֆէնտին ժողովին մէջ իւր հրաժարականը բանիւ բերանոյ մատուցանելէն ետեւ՝ մեր ընկերներէն միոյն, այն է Պէրպէրեան էֆէնտի յայտարարել է իւր հրաժարած ըլլալն, եւ նոյնը կրկնել է նաեւ բարապանին, երբ իրեն կոչնագիր տարել է, ուստի չեմ կարծեր որ այլ եւս պէտք ըլլայ խնդիր յուզել սա կէտին վրայ թէ՛ Ալաճաճեան էֆէնտի հրաժարեալ պիտի նկատուի՞ թէ՛ ոչ: Այլ պարզապէս իւր հրաժարականը քուէի գնելու չեւ վերջացնելու է խնդիրը:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ընդհակառակն ես կը կարծեմ որ բուն իսկ խնդրոյ նիւթը սա է թէ ժողովը Ալաճաճեան էֆէնտին հրաժարեալ կը նկատէ թէ ոչ, եւ այս կէտին վրայ պէտք է տայ իւր քուէն: Արովհետեւ երբ հրաժարական մը պարզ լինի, ուրիշ կերպ տնօրէնութիւն կենթադրէ, եւ երբ պատճառաբանեալ ուրիշ: Երբ է որ Ալաճաճեան էֆէնտին հրաժարել է, բայց գրաւոր չէ իւր հրաժարականն, որպէս զի ժողովը կարենայ որոշակի հասկնալ թէ ինչ պատճառի համար կը հրաժարի նա, եւ թէ պէ՞տք է ընդունիլ անոր հրաժարականը թէ՛ ոչ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովին ներքին կանոնադրին մէջ չկայ այնպիսի տրամադրութիւն մը, որ հարկադրէ հրաժարող երեսփոխանն իւր հրաժարականն անպատճառ գրով ներկայելու, երբ մինչեւ իսկ յատենի ժողովոյ հրաժարի անձամբ, հետեւաբար աւելորդ է խնդիր յարուցանել այս կէտին նկատմամբ: Յայտնի է որ Ալաճաճեան էֆէնտին հրաժարած է. ժողովոյ նիստերուն քանի անգամներէ ի վեր

ներկայ չգտնուիր, կոչնագրերը յետո գարձնելով, եւ այսօր ալ կը յայտարարէ թէ նամակները չընդունելուն պատճառն իւր հրաժարած ըլլալն է միայն, ուստի եւ հրաժարականը քուէի պիտի գնեմ այժմ:

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Անգիր հրաժարական տրուելէն զանազան շիտթութիւններ կը ծագին. կրնայ պատահիլ որ երեսփոխան մը որ եւ է պարագայի մը վայրկենական տպաւորութեան ներքեւ հրաժարած եմ ըսէ, եւ ուրիշ օր մ'սկսի շարունակել իւր պաշտօնն եւ ժողովին ներկայանայ: Ես կը յիշեմ որ Պէլեան Պաղէոս էֆէնտին այսպէս անգամ մը հրաժարած եմ ըսելով մեկնեցաւ ժողովէն, եւ քանի մը նիստէ բացակայ մնալէ ետեւ՝ օրին մէկը նորէն եկաւ իւր աթոռը բազմեցաւ, ուստի այս տեսակ շիտթու թեանց տեղի չտալու համար՝ ամեն պարագայի մէջ պէտք է, կարծեմ, որ հրաժարականները գրաւոր մատուցուին ժողովին:

ԱՅՎԱԶԵԱՆ Ա. ԷՖ. — Դիտել կուտամ ժողովին որ Ալաճաճեան էֆէնտի հրաժարականը պատճառաբանեալ է, քանի որ բողոքելով մեկնած է ժողովէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ալաճաճեան էֆէնտի հրաժարած ըլլալը բացայայտ իրողութիւն մ'է եւ երկբայութիւն չվերցնելու: Ժողովը իւր հրաժարականը կընդունի՞ թէ ոչ, այս կէտը կը մնայ որոշել, որու վրայ ձեր քուէն պիտի խնդրեմ այժմ:

ՉԱՅՆԵՐ. — Շատ աղէկ, շատ աղէկ:

Եւ հետեւապէս Ատենապետ էֆէնտին Ալաճաճեան էֆէնտի հրաժարականը քուէի դրաւ, եւ ժողովը՝ 8 քուէի ընդդէմ՝ 20 քուէով ՉԸՆԴՈՒՆԵՑ զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եւ հիմա որ ժողովը մեծագոյն մասամբ մերժեց Ալաճաճեան էֆէնտին

տի հրաժարականը, կը մնայ Նախագահ Սըրբազան Հօր այս որոշումը հաղորդել անոր, եւ հրաւիրել զինքն որ հաճի իւր երեսփոխանական պաշտօնը շարունակել, ըստ փափաքաւ Ազգ. ժողովոյ:

4.

Հրաժարագիր Ալրուհի Տիւրքի Էֆէնտիի

Ալթուն Տիւրքի էֆէնտի կողմէ ուղղեալ յետագայ հրաժարագիրը կարդացուեցաւ:

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Նախագահ Ազգ. Պատ. ժողովոյ

Ամենապատիւ Սրբազան Տէր:

Անձնական զբաղմանցս տարապայման կերպիւ աւելնալուն պատճառաւ, անկարելի ըլլալով ինձ սոյն միջոցին ո՛ր է ազգային պաշտօն խղճի մտօք վարել, կուգամ ցաւ ի սիրտ հրաժեշտ աալ թէ՛ Երեսփոխանական և թէ՛ Վարչական անդամակցութենէ և խնդրել որ Ձեր Բարձր Սրբազնութիւնն ինչպէ՛ս նաև Ազգ. Պատ. ժողովը բարեհաճի սոյն կրկին հրաժարականս ներողամտաբար ընդունիլ, հաւաստի ըլլալով միանդամայն թէ՛ պատեհադոյն առթիւ, իմ դուզնաբեայ ծառայութիւնս սիրելի Ազգիս նուիրելու չպիտի վարանիմ երբէք:

Մնամ խորին յարգանօք Ձերումդ Բարձր Սրբազնութեան և ազգիս

Ամենախոնարհ ծառայ Ա. Ալրուհի Տիւրքի

24 Օգոստ. 1879  
Խասգիւղ

( Յետ ընթերցման )

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կը տեղեկաւար սոյն գրութենէն՝ Ալթուն Տիւրքի էֆէնտին պարզապէս իւր անձնական զբաղումներն առարկելով թէ երեսփոխանական պաշտօնէն եւ թէ Քաղ. ժողովոյ անդամակցութենէն միանգամայն կը հրաժարի : Եթէ այս մասին զիտողութիւն ունեցող կայ, կը հրաւիրեմ խօսք առնելու :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ալթուն Տիւրքի էֆէնտին հրաժարականը պարզ է, եւ իբր այն քուէարկելի անվէճ ըստ կանոնի : Բայց վասն զի Ալթուն Տիւրքի էֆէնտին նշանաւոր է իւր ազգասիրական ծառայութեամբն եւ յարգելի ամենուս, ուստի կառաջարկեմ որ ժողովը մերժէ անոր հրաժարականը :

ՄԵՐԵԿԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Այս հրաժարականը կրկին է, մին երեսփոխանութենէ, եւ միւսը Քաղաքական ժողովոյ անդամակցութենէ : Երկուքին նկատմամբ կրնան կարծիքները ասարեւր լինել իրարմէ, ուստի կառաջարկեմ որ զատ զատ նկատողութեան առնուի եւ քուէի գրուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ձեր առաջարկած բաժանումը բանաւոր է, ուստի նախ քուէի կը դնեմ Ալթուն էֆէնտին հրաժարականը յերեսփոխանութենէ, եթէ ժողովը այս մասին չունի ուրիշ ինչ ըսելիք :

Ժողովը կը լսէ, եւ Ատենապետ էֆէնտին քուէի դնելով Ալթուն Տիւրքի էֆէնտին հրաժարականը յերեսփոխանութենէ. ժողովը մեծազոյն մասամբ կը ՄԵՐԵԿԵՄ զայն ըստ առաջարկութեան Քաղաքական էֆէնտինի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը մնայ այժմ Ալթուն Տիւրքի էֆէնտին Քաղաքական ժողովոյ անդամակցութենէն հրաժարելու խնդիրը, ինչ կը թուի թէ այս հրաժարականը Քաղաքական ժողովոյ միջոցաւ ներկայանալու էր, իւր լուծումը դըտ-

նելու համար. ուստի եթէ ժողովը ալ համամիտ կը գտնուի, կը յղենք զայն նախապէս առ Քաղ. ժողովն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ազգային ժողովն է ընտրող, եւ հետեւաբար հրաժարականն ընդունելու կարող մարմինն, ուստի բնական է որ ընտրեալն անոր ուղղէ իւր հրաժարականը եւ խնդիրը յատենի աստ գտնէ իւր լուծումը :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Միեւնոյն զիտողութիւնը պիտի ընէի եւ ես, բայց Քրիստոստուր էֆէնտին կանխեց զիս, կը ձայնակցիմ անոր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Տարակոյս չկայ թէ ընտրող մարմինն Ազգ. ժողովն ըլլալով անոր կը սպասկանի ընտրեալ ժողովականին հրաժարականի խնդիրն լուծել, ընդունելով կամ մերժելով զայն, բայց իմ զիտողութիւնս այս օրինական պայմանին ժխտումը չէր ենթադրեր : Մինչեւ ցարդ սովորութիւն է որ Քաղաքական ժողովն ինք կը ներկայէ յայտադրով մ'իւր անդամակցաց հրաժարականներն, այն փորձերէն ետեւ, որ ի գործ կը դրուին հրաժարողները յորդորել եւ հրաժարականին ետ առնել տալու համար : Բայց վասն զի Ալթուն Տիւրքի էֆէնտինի հրաժարականն առանց անցնելու Քաղ. ժողովոյ բովէն, որ թերեւս տեղեակ չէ իւր անդամակցին հրաժարելուն, ուղղակի կուզայ հոս, ուստի լաւագոյն թուեցաւ ինձ միանգամ առ Քաղ. ժողովն յղել հրաժարագիրը, բայց եթէ ժողովը չուզեր այսպէս ընել, ես եւս չեմ պընդեր իմ զիտողութեանս վրայ :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Այդ տեսակետով կը համակերպիմ ձեր զիտողութեան, եւ կառաջարկեմ որ Սրբազան Պատրիարք Հօր յանձնուի այդ հրաժարականը :

ՄԵՐԵԿԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Եթէ ժողովն անպատճառ հարկ տեսնէ այդ հրաժարականը Քաղ. ժողովոյ յղելու, ի հարկէ արգելք մը չը կայ ասոր դէմ. բայց ըստ իս աւելորդ է այս՝

5

Երեսփոխանական նորոգ բնորութիւն

Պալատու թաղին կողմէ երեսփոխանական ընտրութիւն մը կատարուած, եւ արդիւնքը Քաղ. ժողովոյ կողմէ ծանօթագրով հաղորդուած էր Ազգ. ժողովոյ : Ատենապետ էֆէնտին սոյն ընտրութեան վերաբերեալ գրերն Քաղ. ժողովոյ ծանօթագրին հետ մի առ մի ներկայեց ժողովին, որ ահաւասիկ :

Մանօրագիր Քաղ. ժողովոյ

Վսեմաշուք Ատենապետ փաշա Ազգային ժողովոյ

Պալատու թաղի պակաս մէկ երեսփոխանին տեղ կատարուած նոր ընտրութեան տեղեկագիրը հասած ըլլալով, կը մատուցանեմ ընդ գրոյս Ազգ. ժողովոյ ի վաւերացումն,

Ընտրեալն որ է Տելեմար էֆէնտին Լնքսէրճեան, ասկէց առաջ ալ երեսփոխանական պաշտօն վարած ըլլալով, Պատրիարքարանս չունի զիտողութիւն ինչ ի վերայ Սահմանադրական հանգամանաց նորա, իւր յանձնառութիւնն ալ աղահովեալ է առ Ընտրող ժողովն դրած պատասխանով, որ ընտրական տեղեկագրոյն հետ կցեալ է :

Պ. Կ. Երեսփոխան Արքեպիսկոպոս

24 Օգոստոս 1879

Ի Պատրիարքարանի Հայոց Կ. Պօլիս

եւ ինչո՞ւ, ըսեմ պատճառը : Այդ հրաժարագիրը նոյն իսկ Սրբազան Պատրիարքը հաղորդած լինելով ժողովոյս, անշուշտ նորին Սրբազանութիւնն՝ եթէ հարկ դրար, կրնար ներկայել զայն Քաղ. ժողովոյ, իբր նախադաս նոյն ժողովին, բայց քանի որ այսպէս չէ ըրած, կը նշանակէ թէ այդպիսի պէտք մը չէ տեսեր ինք, այս պատճառաւ աւելորդ կը գտնեմ այդ յղումը իսկ գալով հրաժարականին ընդունելութեան, Ալթուն էֆէնտին ի մօտոյ կը ձանչեմ ես, եւ զիտեմ որ իւր զբաղումներն բաղմապատկուած են այս միջոցիս, յորմէ հետեւած է իւր հրաժարելուն, ուստի իմ կարծիքս է՝ ընդունել անոր հրաժարականն Քաղաքական ժողովոյ անդամակցութենէն, քանի որ իւր զբաղմունքն ատեն չպիտի թողուն իրեն. բայց չընդունիլ երբէք անոր միւս հրաժարականն, ինչպէս շատ իրաւամբ մերժեց արդէն ժողովս :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը խնդրենք որ եթէ կարելի է՝ Սրբազան Պատրիարքն այս խնդրոյն վրայ չնոր՝ ընէ իւր կարծիքը յայտնել :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Իմ կարծիքս հրաժարականներու խնդրոյն մէջ շատ բացորոշ է : Ազգ. ժողովն իմ հրաժարականս չընդունեց, ուստի ես եւս ամեն հրաժարական կը մերժեմ, եւ գամենքը պարտաւոր կը նկատեմ մատուցանելու ազգին ինչ ծառայութիւն որ կը պահանջուի :

( Հաւանութեան ցոյցեր )

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ Ալթուն էֆէնտին հրաժարականը Քաղ. ժողովոյ անդամակցութեան պաշտօնէն, եւ ժողովն ստուար մեծամասնութեամբ կը ՄԵՐԵԿԵՄ զայն :

Տեղեկագիր Ընտրող. ժողովոյ Պալատու.

Ամենապատիւ Տէր

Յուլիսի 11 ին մեզի եկած հրամանին համեմատ ըստ տրամադրութեան Ազգ. Սահմանադրութեան, թաղիս հրամարեալ երեսփոխան էֆէնտի յաջորդ մը ընտրելու համար, սոյն ամսոյ 29ին Ընտրողական ժողով կազմուելով՝ երեք ընտրելի որոշեց, որք են՝

Մեծ. Տելեմաք էֆ. Էնքսէրճեան

» Մ. Յակոբ » Սարգիսեան

» Սահակ » Բարայեան

և այս ցանկը ներկայացուց ի տես ժողովրդոց. հետեւեալ կիւրակէն՝ օգոստոս 5, քուէարկութիւն կատարուելով, 38 քուէէն բացարձակ առաւելութեամբ 24 քուէիւ ընտրեցաւ Մեծ. Տելեմաք էֆէնտի Էնքսէրճեան Ազգ. երեսփոխան ի դիմաց թաղեցուցս. նորին յարգութեան հաճութեան գիրն ևս առնելով, ներփակեալ կը տեղեկագրեմք ի պարտ ու պատշաճ տնօրէնութիւն:

1879 Օգոստոս 9 Նախագահ ՚ի Պալատ Ընտրողական ժողովոյ Գրիգոր Եպիսկոպոս

Յանձնառագիր Ընտրելոյն

Գերատառիւ Սրբազան Տէր

Նախագահ Պալատու. Ընտր. ժողովոյ

Պատիւ ունեցայ ընդունիլ Ձեր Սրբազնութեան Օգոստոս 7 թուով նամակն, որով կը ծանուցանէիք Պալատու թաղէն Ազգ. երեսփոխան ընտրուիլս:

Պալատու Պատուարժան թաղեցուց իմ վրայ ցոյց տուած վստահութիւնն զիս կը քաջալերէ կրկին ընդունիլ այն փափուկ պաշտօնն, յուսալով որ ներողամիտ պիտի գտնուին իմ թերութեանցս:

Մատուցանելով կրկին շնորհակալութիւններս,

Մնամ Ձերդ Սրբազնութեան

Խոնարհ ծառայ

Տելեմաք Էնքսէրճեան

1879 Օգոստոս 9

Բերա

(Սոյն գրութեանց ընթերցումէն ետեւ.)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս տեղեկացար սոյն գրութիւններէն, Տելեմաք էֆէնտի Էնքսէրճեան Պալատի թաղին կողմէ երեսփոխան ընտրուած եւ Քաղ. ժողովն իւր ծանօթագրով հաստատած է անոր ընտրելութեան սահմանադրական հանգամանքներն: Այլ մնայ հիմայ քննել ընտրութեան օրինաւորութիւնն, եւ այնուհետեւ վաւերացման ենթարկել: Ուստի այս կէտին վրայ դիտողութիւն ունեցողները կը հրաւիրեմ խօսք առնուլ:

Սոյն ընտրութեան դէմ որ եւ է դիտողութիւն տեղի չունենալով՝ Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ զայն, հետեւապէս ժողովը միաձայն անոր օրինաւորութիւնը հաստատելով կը վ.Ա.Ի.ԵՐԱՅՆԵՆԻ, եւ Ազգային երեսփոխան կը Հ.Ռ.Ձ.Ա.ԿԷ:

Տելեմաք էֆէնտի Էնքսէրճեան:

6.

Եկեղեցական Համագումար ժողովոյ տեղեկագիրը.

Եկեղեցական Համագումար ժողովոյ կողմէ մատուցեալ յետագայ տեղեկագիրը կարգացուցաւ:

Ամենապատիւ Սրբազան Պատր'արք Հայր Նախագահ Եկեղեցական Համագումար ժողովոյ.

Ըստ հրաւիրանաց Ամենապատիւ Բարձր Սրբազնութեան Ձերոյ Եկեղեցական Համագումար ժողովն այսօր (22 Օգոստոս 1879) գումարուելով յԱզգ. Պատրիարքարանի, հրաւիրեալ 81 Եկեղեցական Հայրերէն միայն քսան Եկեղեցական Հայր ներկայ գտնուեցան, և ըստ հրամանի Ամենապատիւ Բարձր Սրբազնութեանդ Ատենապետ Բարձր Մարտիրոս Բարձր Սրբազնութեան զմեզ հետ ընտրուեցաւ ի ժամ 7 1/2:

Սրբազան Հայր, Եկեղեցական Համագումար ժողովն ի ներկայութեան քսան Եկեղեցական Հարց իւր դիւանը կազմէին ետքն՝ անմիջապէս սկսաւ քուէարկութեան ձեռնարկել, և քուէհամարի գործողութիւնը կատարուելով՝ կրօնական ժողովոյ հրաժարեալ երեք անգամոց տեղ նորերը ընտրելու համար եռապատիկ թուով ընտրելեաց ցուցակը պատրաստեց, զազանի քուէարկութեամբ և բացարձակ առաւելութեամբ հետեւեալ Եկեղեցական Հայր ընտրուեցան, որք են՝

- 1. Տ. Գրիգոր Եպս. Խառօղի 16
- 2. Տ. Յովհաննէս Վրդ. Փափաղեան 13
- 3. Տ. Յովհաննէս Քհնյ. Շահապեան 12
- 4. Տ. Տաճատ Վրդ. Ոսկանեան 11
- 5. Տ. Չաքարիա » Չիւմրիթճեան 12
- 6. Տ. Յովհաննէս » Արշարունի 10

Եւ որովհետեւ ընտրելեաց ցուցակն ինն Եկեղեցական Հայրերէ պիտի բաղկանար, ուստի ըստ կրկին հրամանի Ամենապատուութեանդ՝ երկրորդ անգամ ի նիստ ժողովոյ քուէարկութեան և քուէհամարի գործողութիւն կատարելով՝ համեմատական առաւելութեամբ հետեւեալ երեք Եկեղեցական Հայր ընտրուեցան, որք են՝

տեւեալ երեք Եկեղեցական Հայր ընտրուեցան, որք են՝

- 1. Տ. Գրիգոր Եպս. Մինթանճեան 9
- 2. Տ. Եղիշէ Վրդ. Այվազեան 8
- 3. Տ. Եղիշէ Քհնյ. Մայր Եկեղեցուց 7

Սրբազան Հայր, Եկեղեցական Համագումար ժողովն իւր պաշտաման աւարտեալ լինելը խոնարհարար յայտնելով Ամեն. Բարձր Սրբազնութեան Ձերում իւր սոյն տեղեկագիրը կը ներկայէ ի պարտ ու պատշաճ տնօրէնութիւն:

Մնամք

Ամենապատիւ Սրբազնութեան Ձերում Ի դիմաց

Եկեղեցական Համագումար ժողովոյ Ատենապետ

Յակոբ Վ. Ալոտ փափաղեան Մ. Ե. Ի.

22 Օգոստոս 1879 ՚ի Պատրիարքարանի Հայոց

(Յետ ընթերցման)

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Այդ տեղեկագրին մէջ կէտ մը կը նկատեմ, բացատրութեան կարօտ, եւ զայն ժողովին ուշադրութեան կը ներկայեմ: Տեղեկագիրը Համագումար ժողովոյ կողմէ ուղղուած է առ Սրբազան Պատրիարքն՝ Համագումար ժողովոյ նախագահի տիտղոսով, բայց այդ տեղեկագիրը նոյն ժողովն ըզխելով Ազգային ժողովոյ կը ներկայանայ, ուստի, կարծեմ, օգտք էր որ յանուն Նախագահի Ազգային ժողովոյ ուղղուած լինէր առ Սրբազան Պատրիարքն, որ ինչպէս յայտնի է ազգային համայն ժողովոց նախագահն է Սահմանադրապէս, եւ առ Նորին Սրբազնութիւնն ուղղեալ գրերն՝ որ ժողովոյ որ ներկայանալի են, անոր նախագահի տիտղոսովը կը մատուցուին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կերեւի թէ սխալ մը տեղի ունեցած է:

ԲԱՓԱՄԱՃՆԱՆ Մ. ԷՖ. — Ուրեմն պէտք է որ այդ սխալն ուղղուի, եւ այդպէս ներկայանայ տեղեկագիրը ժողովիս :

Տ. ՅԱԿՈՒՅ ՎՐԳՊ. ՓԱՓԱՋԵԱՆ. — Իբր ատենադպիր Համագումար ժողովոյ այն նիստին, ուր կրօն. ժողովոյ ընտրելեաց ցանկը պատրաստուեցաւ, կը փութամ յայտարարել որ ժողովոյ գիւանը ցարդ ընդունուած սովորութեան հետեւելով, տեղեկագիրն այդ տիտղոսով ուղղած է առ Սրբազան Պատրիարքն :

ԲԱՓԱՄԱՃՆԱՆ Մ. ԷՖ. — Եթէ ցարդ քանցառութիւն մը կամ սխալ մը տեղի ունեցած է, չեմ կարծեր որ այս բաւական փաստ մը լինի անոր շարունակութիւնն արդարացընելու :

Տ. ՅՈՎ. Հ. ՔՆՆՅ. ՄԿՐԵԱՆ. — Ըստ իս' աւելորդ է այս կէտին վրայ խնդիր յուղել. վասն զի Եկեղեցական Համագումար ժողովոյ նախագահն՝ այն է Սրբազան Պատրիարքը նաեւ Ազգային ժողովոյ նախագահն է, ուստի ինչ տիտղոսով ալ ուղղուի գիրը, մի եւ նոյն բանն ըսել է, եւ տեղի չմնար շփոթութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ձեմ կարծեր որ հարկ ըլլայ այս կէտին վրայ վիճաբանութիւնն աւելի յառաջ մղել, եւ աւելի քան զայս ծանրանալ Համագումար ժողովոյ տեղեկագիրը՝ թէ եւ յանուն նախագահի նոյն ժողովոյ ուղղեալ է առ Սրբազան Պատրիարքն, բայց նորին Սըրբազնութիւնն աւանդած է զայն Մայր Դիւանի, իբրեւ Ազգ. ժողովոյ վերաբերելի գրութիւն, ինչպէս որ է իրօք, եւ այս կերպով որ եւ է հետեւանք չէ ունեցած այդ տիտղոսի շփոթութիւնն, որու վրան գիտողութիւն եղաւ : Իսկ դալով խնդրոյն ահա ասիկ Համագումար ժողովը կրօնականին պակասած անդամոց համար պէտք եղած ընտրելեաց ցանկը պատրաստած է, կը մնայ ուրեմն յաջորդ նիստի մը մէջ ընտրութեան ձեռնարկել :

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԷՖ. — Կը յիշեմ որ Քաղ. ժո-

ղովէն ալ պակաս անդամներ կային, որոնց տեղ նոյնպէս նոր ընտրութիւն որոշուած էր, բայց Ատենապետաց գիւանը չկրցաւ կազմուիլ՝ որ ընտրելեաց զեղչելի ցանկը պատրաստէր, ուստի կառավարիւմ փոխանակ օրակարգն անցընելու այս ընտրութիւնը՝ յետաձգել զայն, մինչեւ որ այդ ցանկն ալ պատրաստուի, եւ կարելի լինի երկու ընտրութիւնները միահաղոյն կատարել :

ՓԱՓԱՋԵԱՆ Մ. ԷՖ. — Այն նախաքննիչ գիւաններն՝ որ դանդաղեցան ցարդ իրենց ատենապետներն ընտրելու, պարտադանց են, եւ պէտք է զիրենք վերջնապէս հրաւիրել իրենց պարտաւորութիւնը կատարելու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը խնդրեմ ուրեմն նախաքննիչ գիւաններէն որ բարեհաճին իրենց ատենապետաց ընտրութիւնը փութացնել, որպէս զի Ատենապետաց գիւանը կարենայ խըմբուիլ, եւ Քաղ. ժողովոյ ընտրելեաց զեղչելի ցանկը պատրաստելով՝ յառաջիկայ նիստին բերել : Ուստի, եթէ կը հաճիք, կապասնք այս ցանկին, եւ ինչպէս Ատենադպիր էֆէնտին առաջարկեց, երկու ընտրութիւն միանգամայն կը կատարենք :

Ժողովը կը ՀԱՒԱՆԻ այս առաջարկութեան :

7.

Ընտրութիւն Ատենապետի Յարաբերութեան դիւանին

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ահաւասիկ նախաքննիչ գիւաններէն մինն ալ, այն է Յարաբերութեան գիւանն, ինչպէս տեղեկութիւն տրուեցաւ ինձ այս վայրկենիս, ընտրած է իր ատենապետն, որ է,

Մկրտիչ էֆէնտի Էսսեան :

8.

Երեսփոխան Ս. Փափագեան Էֆէնտիի հարցումը .

Երեսփոխան Ս. Փափագեան էֆէնտի կողմէ ուղղեալ յետագայ հարցումը կարդացուեցաւ :

Լրագրաց մէջ կարդացինք թէ Վանայ առաջնորդական տեղապահ Երեսփախակոպոս վերջին օրերս Վանայ մէջ 2000 ի մօտ ժողովրդեան առջև քարոզ մը խօսելով, պատերազմին ատեն Ալաշկերտի մէջ Շէյխ ձէլալէտտինի եւ անոր քիւրտերուն ձեռօք ի դործ դրուած կստորած եւ պատուոյ բռնաբարութիւնք Սլաշկերտի Հայոց մեղաց պատճառաւ Աստուածային պատիժ մ'են եղեր, եւ թէ այդ դաւառի Հայ ժողովրդոց ինք առաջուց այցելութիւն բրած ըլլալով, այդ աղետալի կոտորածը եւ բռնաբարութիւնքը գուշակած է եղեր, եւ թէ գուշակեր է որ, եթէ Վանայ ժողովուրդն ալ մեղքէ զդոյշ չկենայ, այդպիսի կոտորածի եւ բռնաբարութեան պատժոյ ենթակայ պիտի լինի :

Նաև կարդացի որ Շիրոքըլու գիւղի Աթօ անուն բէխը, կտրիճ մարդ, ասկէ 15 տարի առաջ երէք Քիւրտ սպաննած է եղեր, եւ դատաստանաւ անմեղ ելեր է, հաստատուելով որ այդ Քիւրտերը զինքը սպաննելու եկեր են եղեր, եթէ ինք կտրիճութեամբ դանձր չսպաննէր : Կտրիճ Աթօն իր այս գործը կը խոստովանի վարդապետի մը եւ վարդապետը ցմահ պահք պահելու ասպախարանաց ենթարկեր է զկտրիճ Աթօն, որ երկայնամտութեամբ եւ զարմանալի հնազանդու-

թեամբ այս կրօնական պատժոյն կը տանի եղեր ցարդ :

Իմ հաւատարմ անդամ չգար որ Երեսփախակոպոս այնպիսի քարոզ մը խօսած ըլլայ, եւ թէ վարդապետ մը կը արիճ Հայ մը այդպիսի չարաչար տանջանաց ենթարկէ. ուստի կը հարցնեմ կրօնական ժողովոյ որ տեղեկացնէ մեզ թէ ստոյգ են ասոնք, եթէ ստոյգ չեն, պէտք է որ հերքէ, քանզի մեր ազգային ներկայ վիճակին մէջ խիստ տխուր եւ անհաճոյ տպաւորութիւն կրնան ներդործել ոչ միայն մեր ազգայնոց այլ եւ օտարաց իսկ. չեմ ուղեր աւելի մանրամասնել այս տպաւորութիւնը : Իսկ եթէ ստոյգ են, Երեսփախակոպոս Վանայ նման ընդարձակ Հայաբնակ վիճակի մը տէր ըլլալու յատկութիւնը չունենալով, լաւ է որ Լիմ կամ կտուց անապատներու մէջ ճգնաւորութեան կոչում ունենայ, եւ այն վարդապետն որ զկտրիճ Աթօն ցմահ պահք պահելու ենթարկած է. կրօնական ժողովը զայդ վարդապետը նոյն պատժոյ ենթարկելով, զկտրիճ Աթօն պէտք է արձակէ իր կապէն :

24 Օգոս. 1879 Ազգային Երեսփոխան Ս. Պ. Պ. Փափագեանց

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կը տեսնէք հարցումն առ կրօն. ժողովն ուղղեալ է, զոր պէտք է ըստ կանոնի յղել առ նա՝ յաջորդ նիստին իւր կարծիքը յայտնելու համար : Բայց եթէ հարցման կամ հարցապնդման հեղինակն ստիպողութիւն խնդրէ եւ ժողովն ընդունի, այն ատեն պարտաւոր է հարցապնդեալ պաշտօնեայն նիստին վերջերը յայտնել կարծիքն ի պատասխանի հարցման : Արդ՝ միթէ հեղինակըն ստիպողութիւն կը խնդրէ, կամ կրօնական ժողովոյ պատկառելի գիւանն կը հաճի ինք կանխել եւ առ ժամայն տեղեկութիւն մը տալ :



Տ. ՄԱՏԹԷՍԵՍ ԵՊՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ինչպէս յիշեցիք, Ատենապետ էֆէնտի, ներքին կանոնադրին յաւելուածական նորոգ յօդուածոց համաձայն հարցումը կը յղուի առ հարցապնդեալ պաշտօնեայն, որ պարտաւոր չէ կարծիք յայտնել առ օրին, մինչեւ որ ժողովն անոր ստիպողութիւնը չընդունի. ուստի կրօն. ժողովն այժմէն չունի ինչ ըսելիք:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ես ստիպողութիւն չեմ տուած հարցմանս, վասն զի այնպէս կը կարծեմ թէ կրօնական ժողովն կամ Պատրիարքարանն ալ անտեղեակ է համբաւեալ եղելութեանց, եւ զանոնք քննել, եւ ստուգել է ետեւ՝ պիտի կարենայ անշուշտ պատասխան տալ մեզ:

Տ. ՅՈՎ. Է. ՔՆՆՅ. ՄԻՐԵԱՆ. — Երեմիա եպիսկոպոս հանրածանօթ անձ մ' է արդէն, եւ Պօլսոյ ազգայինը կը ճանչեն զինքը: Տակաւին վարդապետ առաջնորդ էր Բաղիչու, եւ չէր բռնած աջակցի ընթացք մ'որ կը լըսուի այժմ իւր վրայ, այլ ընդ հակառակն այլմաստ յայտարարութիւններ ըրած է միշտ այս տեսակ պարագայից մէջ, եւ պատուիրած է ժողովրդեան տարբեր եղանակաւ գործել իւր իրաւանց խնդիրներուն մէջ: Բայց հիմա որ այսպիսի գրոյցներ հոչակ կը գտնեն, հարկ կըլլայ անշուշտ Ազգ. Վարչութեան՝ բացատրութիւն պահանջել, բայց ոչ իրմէ, այլ տեղւոյն կրօն. ժողովէն:

Տ. ՄԱՏԹԷՍԵՍ ԵՊՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Պարտ կը համարիմ յայտարարել որ գժրաղիտարար Վանայ դաւառին, այս կարեւոր եւ բազմահայ վիճակին մէջ, դեռ եւս չկրցաւ Սահմանադրութիւնը գործադրուի, դեռ եւս Գաւառական, եւ կրօնական ժողովներ չկան, եւ Երեմիա եպիսկոպոս Պատրիարքարանի բազմաթիւ յանձնարարութիւններն՝ որ եղած են այս մասին, անյսելի թողած է, լռութեամբ պատասխանելով միշտ:

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Հարցման նիւթ ընծայող զրոյցը կրնայ ստուգութեան կար-

աիլ, սակայն Երեմիա եպիսկոպոսի ուրիշ արարքն եւ ցարդ բռնած ընթացքը՝ հանրածանօթ է, եւ հրապարակագոյժ եղած: Ամենեւին անյարմար է նա՝ մի այդպիսի կարեւոր գաւառի, այսպիսի ժամանակի մէջ առաջնորդական պաշտօն վարելու, եւ չհասկնար երբէք ժամանակին պահանջումներն, եւ մեր ազգին պիտոյքն: Կեռ չէ մոռցուած Գերմանացի մեռեալին դէպքը, որու զլացաւ նա սպաստանարան տալ ազգային դերեզմանատան մէջ եւ պատճառ եղաւ կարեւոր դեպքանատան մը հետ մեր Պատրիարքարանի յարաբերութեանց ցրտանալուն, մինչեւ որ շնորհիւ Սրբազան Պատրիարքին, բացատրութիւններ տրուելով՝ Կեռապանատունն իւր համակրական յարաբերութիւնները վերահաստատեց մեզ հետ:

Իզմիրլեան Սրբազան յայտարարեց թէ Երեմիա եպիսկոպոս դեռ Գաւառական ժողովները չէ կազմած եւ Սահմանադրութիւնը գործադրութեան մէջ չէ դրած քաղաքին մէջ, այսպէս ամեն օր իւր նկատմամբ գանդասաներ կը հասնին, որոցմով լի են լրագրաց էջերն: Ես կառաջարկեմ որ Ազգ. ժողովն Երեմիա եպիսկոպոսի պաշտօնանկութիւնը պահանջէ, եւ չեմ հասկնար թէ ի՞նչու նա դեռ իւր պաշտօնին մէջ կը շարունակէ այսքան դժգոհութիւններէ ետեւ, մինչդեռ իրենց գաւառէն պաշտպանուած առաջնորդներ պաշտօնանկ կը լինին եւ Պօլիս կը կոչուին:

ՓԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ստուգիւցաւալի է որ Երեմիա եպիսկոպոս չէ գործադրած ցարդ Սահմանադրութիւնը Վանայ գաւառին մէջ, եւ անյսելի թողած է Վարչութեան ազգարարութիւններն, ինչպէս յայտարարեց Մատթէոս Սրբազան: Կարծեմ թէ Վարչութիւնն իրաւունք եւ արտօնութիւն ունի պաշտօնանկ ընելու այն առաջնորդներն, որ կանսասուն այսպէս Ազգ. իշխանութեան դէմ, ուստի կառաջարկեմ որ Վարչութիւնն այդ արտօնութիւնը գործադրէ Երեմիա եպիսկոպոսի նկատմամբ, իսկ՝ եթէ արտօնութիւն չունի, արուի իրեն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս միջադէպը հար-

ցումն ծագեցաւ, որ առիթ ընծայեց մեր պաշտօնակցաց ուսանց Երեմիա եպիսկոպոսի պաշտօնավարութեան ընթացքը քննադատելու, եւ ուրիշ զեղծումներ յիշելու, որոց պատճառ եղած է նա: Առաջարկող եղաւ որ Ազգ. ժողովն Երեմիա եպիսկոպոսի պաշտօնանկութիւնը պահանջէ, եւ ուրիշ առաջարկութիւն մ'արտօնութիւն ուզեց ալ Վարչութեան դայն պաշտօնանկ ընելու: Սակայն Վարչութեան իշխանութեան եւ իրաւասութեան սահմանը դժուար է արդէն, եւ ունի նա արտօնութիւն տալնորոգ մը պաշտօնանկ ընելու: Եթէ Երեմիա եպիսկոպոսի ընթացքն ուղղակի Ազգ. ժողովոյ ուշադրութիւնը կը գրգռէ, եւ դժգոհութիւն կազդէ, կարծեմ իւր տալիք քուէն սա կերպով կրնայ ըլլալ՝ որ իւր դժգոհութիւնն եւ ցաւը կը յայտնէ այս վիճակին վրայ եւ Վարչութեան կ'սպասէ անոր դարմանն, եւ հարկ եղած միջոցներուն գործադրութիւնը:

Տ. ՄԱՏԹԷՍԵՍ ԵՊՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Պէրպէրեան էֆէնտին Գերմանացի մեռեալին դէպքը յիշատակեց, որու Երեմիա եպիսկոպոս զըլացեր է ասպնջականութիւն ընծայել Հայոց գերեզմանատան մէջ . . .

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — (Ընդմիջելով) Այո՛, եւ այն ալ հինգ ոսկւոյ շահու մը համար:

Տ. ՄԱՏԹԷՍԵՍ ԵՊՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — (Շարունակելով) Այս եղելութեան վրայ դառն դիտողութիւններ ուղղուեցան Պատրիարքարանի, եւ Ազգ. Վարչութիւնը Սրբազան Պատրիարք Հօր հետ համախոհութեամբ ուշադրութեան առնելով խնդիրն՝ իւր բոլոր հետեւանօք եւ նկատելով նաեւ որ մեռեալն արդէն Հայ բահանայի մը միջոցաւ հաղորդուած էր իւր վերջին վայրկեաններուն մէջ, հրաման յուղարկեց Երեմիա եպիսկոպոսի որ հանդուցելոյն մարմինը հանելով դամբանէն, Հայոց գերեզմանատան մէջ թաղէ: Այս հրամանը գործադրուեցաւ, սակայն Երեմիա եպիսկոպոս

Վարչութեան այս անօրէնութեան մէջ բողոքականութեան ստուեր մը նշմարեր, եւ մինչեւ իսկ մտաբերեր է ամբաստանել կրօն. ժողովն, զոր Ազգային ժողովը իւր ընտրութեամբ պատուած է: Երեմիա եպիսկոպոս ինչպէս ըսի արդէն, Վարչութեան ազգարարութեանց չանսար, եւ այսպիսի վիճակի մէջ՝ այլ եւս ուրիշ ազգուսնօրէնութիւն պէտք է:

ՎԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Քանի որ այս վիճակին հասեր է խնդիրը, ես կը կարծեմ որ Վարչութիւնը շատ ուշ մնացեր է մինչեւ ցարդ զայն պաշտօնէ չդադրեցնելուն համար:

ՔՍՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Իմ առաջարկութիւնս միայն Երեմիա եպիսկոպոսի պաշտօնանկութեանը համար չէ, այլ այն ամեն առաջնորդք, որ այսպէս ազգային գործոց վնաս կը հասցնեն, եւ Վարչութեան որոշմանց դէմ կանսաստեն, ինչպէս է նաեւ Եղիպտոսի Մեսրոպ եպիսկոպոսը, պէտք է Վարչութեան կողմէ պաշտօնանկ լինին:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Իմ հարցումս ուրիշ խնդիրներ գրգռեց եւ մինչեւ Երեմիա եպիսկոպոսի պաշտօնանկութիւնը պահանջուեցաւ: Մենք կը լսենք որ արդէն Վանայ մէջ ընտրութիւնները կատարուելու վրայ են, եւ արդարութիւն է առ այժմ սպասել . . .

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — (Ընդմիջելով) Երեմիա եպիսկոպոս չկազմեր ժողովները, քանզի գիտէ թէ զինքնպիտի ընտրեն առաջնորդ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով) Գերմանացի մեռեալին դէպքը ծանրակշիռ էր արդարեւ, այն ատեն լռեցինք մենք, բայց ոչ թէ անտարբեր էինք, այլ վասն զի գիտէինք որ Վարչութիւնը զայն ուշադրութեան նիւթ ըրեր եւ բանակցութեան մէջ էր Գերմանական դեսպանին եւ Երեմիա եպիսկոպոսի հետ: Եւ ի՞նչ եղաւ այս բանակցութեանց արդիւնքը, Երեմիա եպիսկոպոս, որ մերժեր էր մեռեալին

վերջին օթեւան մը տալ Հայոց գերեզմանա-  
տան մէջ, հարկադրեցաւ վերջապէս Վարչու-  
թեան հրամանաւ անոր մարմինն երթալ հանել  
դամբանէն եւ տանիլ Հայոց գերեզմանատունը  
թաղել: Երեմիա Եպիսկոպոս յանցանք մը դոր-  
մեց, եւ անարգանօք պատիժը կրեց: Երեմիա  
Եպիսկոպոսի նկատմամբ ուրիշ դանդառներ ալ  
կը լուին: Դեռ պահ մ'առաջ լրագիր մը ցոյց  
տուին ինձ, զոր հարեւանցի աչքէ անցնելով  
կարգացի որ Հայ մեռեալի մը թաղմանը հա-  
մար տուրք մը պահանջեր է, տեսակ մը խա-  
րան անշուշտ. մեռեալն անթաղ մնացեր է  
մինչեւ որ այդ գումարը հայթայթեր եւ վճա-  
րեր են, բայց այդ միջոցին մեռեալին մար-  
մինը շանը ճարակ եղեր է: Բայց այս ամենն  
ստուգութեան կարօտ են: Իմ հարցումս այժմ  
միայն Երեմիա Եպիսկոպոսի տուած մոլեռան-  
դական քարոզին եւ դժբաղդ Աթօի կրած ան-  
լուր դատապարտութեանը վրայ է: Տասն եւ  
հինգ տարի պահոց դատապարտել մարդ մը,  
իւր կեանքը պաշտպանած ըլլալուն համար,  
ի՞նչ սոսկալի բան Դեռ այս տարի մայիս 27ին  
անմեղ ապաշխարողին պանիր ուտել առաջար-  
կեր են, բայց նա քաւելու համար յանցանքը,  
զոր չունի, մերժեր է, եւ կը շարունակէ իւր  
մշտատեւ ապաշխարութիւնը:

(Քրթմնջիւն եւ դժգոհութեան ցոյցեր  
ընդդէմ Երեմիա Եպիսկոպոսի:

S. ՄԱՏԹԵՈՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ըս-  
ուեցաւ թէ Վանայ մէջ ընտրութիւնք կա-  
տարուելու վրայ են: Երբ Գաւառական ժողո-  
վին մեծադիմ մասը կազմուի, առանց ամբողջ  
ընտրութեան աւարտին սպասելու, կը դուռնա-  
րի ժողովը եւ կը գործէ, ընտրութեան յայտա-  
գիրը Վարչութեան հաղորդելով: Բայց Վա-  
նայ վիճակէն դեռ այսպիսի յայտագիր մը չէ  
եկած:

ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Երեմիա Եպիսկո-  
պոս Վանայ առաջնորդը չէ, այլ Կեդր. Վարչ-  
ութեան կողմէ յուղարկուած է առաջնորդա-  
կան տեղապահի կամ պատրիարքական փոխա-  
նորդի տիտղոսով, եւ իւր պաշտօնն է Սահ-  
մանադրութիւնը գործադրել գաւառին մէջ:

Չորս տարիէ ի վեր այս պաշտօնը յանձնուած  
է իրեն, սակայն Երեմիա Եպիսկոպոս անգործ  
նստիւր եւ այս պատճառաւ դանդառանաց  
տեղի տուեր է: Ատուգիւ շատ դարմանալի է  
որ Վարչութիւնը մինչեւ ցարդ համբերեր է  
անոր այս անգործութիւնն եւ պարտազանցու-  
թիւնը տեսնելով, այս համբերութիւնը շա-  
փազանց է:

ՁԱՅՆԵՐ. — Այո, այո:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը բաւէ կարծեմ այս-  
քան վիճարանութիւն այս միջադէպին վրայ,  
եւ եթէ կը հաճիք խնդիրը քուէի պիտի դնեմ  
այժմ սա բանաձեւով թէ՛ Ազգային ժողովը  
Պէրպէրեան եւ Քաթաճեան էֆէնտիներու  
առաջարկութեան համաձայն՝ Երեմիա Եպիս-  
կոպոսի եւ ուրիշ համանաման առաջնորդաց  
դէմ, որ հակասահմանադրական եւ իրենց  
կոչմանն անարժան ընթացից մէջ կը գտնուին,  
իւր ցաւը յայտնելով կը յանձնարարէ Վարչու-  
թեան ինչ որ հարկ է ի գործ դնել անոնց նը-  
կատմամբ:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Առաջնորդա-  
կան խնդրոց մէջ Պատրիարք եւ Վարչութիւն  
մեծ գծուարութեանց մատնուած են, եւ թէ  
եւ մէն մի գաւառի պիտոյքն եւ կարօտու-  
թիւնները գիտեն, սակայն անկարող են ազ-  
գուապէս օժանդակել անոնց, եւ իւրաքան-  
չիւրին վիճակին յարմար եւ արժանաւոր ա-  
ռաջնորդներ ընտրել եւ յուղարկել: Այս դժ-  
ուարութիւնը գլխաւորաբար Սահմանադրու-  
թեան 59րդ յօդուածէն կը բխի, որ առաջ-  
նորդներու ընտրութիւնը վիճակային Գաւա-  
ռական ժողովներու կը վերապահէ: Բայց այս  
ժողովները շատ տեղ իրենց մէջ երկպա-  
ռակ, կուսակցութեանց բաժնուած, այս  
կամ այն վարդապետն կամ Եպիսկոպոսն ա-  
ռաջնորդ ընտրելու կը նկրտին, յարատեւ կը  
մաքառին, եւ շատ անգամ անարժան ընտրու-  
թիւններ տեղի կուենան, որ գաւառներն ող-  
բալի եւ խռովածուի վիճակի մը կը մատնեն:  
Իրաւ է որ՝ առաջնորդական ընտրութեանց ա-  
տեն՝ Պատրիարքարանը ընտրելեաց ցանկ մը  
կուղարկէ, բայց չընտնարարելու համար՝ 59րդ

յօդուածին ողին՝ այս ցանկը սահմանափակ  
թուով չէ, այլ ընդհանուր ցուցակ մ'է ան-  
պաշտօն Եպիսկոպոսաց եւ վարդապետաց, ու-  
րոց ամենքն ալ չեն կրնար անշուշտ առաջնոր-  
դական պաշտաման յարմար լինել: Են որ՝ ան-  
քաղաքագէտ, են որ՝ ժողովուրդը հովուելու  
եւ սիրաշահելու անկարող, պաշտօնի կանց-  
նին, ժողովրդեան մէջ օձտումներ, կազ  
եւ կոխ կսկսին, եւ այսպէս ընտրելեաց ցանկը  
բնաւ ընտրութեանց մէջ օգտակար արդիւնք  
մը չկրնար յառաջ բերել:

Ահաւասիկ դուք հիմա հոս խնդիր յարու-  
ցիք Վանայ վիճակին աղբային գործոց ընթաց-  
քին եւ Երեմիա Եպիսկոպոսի արարմանց վրայ,  
կը տեսնեմ որ ամենքդ ալ դժգոհ էք եւ  
տրտնջալ կսկսիք, իրաւունք ունիք. բայց զի-  
տէք ի՞նչ բանի կը կարօտի այս ընդարձակ գա-  
ւառը, բանիքուն եւ արժանաւոր առաջնորդի  
մը: Թեկնածուներ կան որ խլրտիլ կսկսին,  
պաշտօնը կորդելու համար, բայց ինձի համար  
մի միայն խրիմեան Սրբազանն է այս պաշտօ-  
նին յարմար անձը, որ իրրեւ նախկին Պատ-  
րիարք մեծ ազդեցութիւն կունենայ այն կող-  
մերը: Որոշեցէք ուրեմն հիմա որ զինքն ա-  
ռաջնորդ անուանեմ, եւ այն ատեն՝ Երեմիա  
Եպիսկոպոսը պաշտօնանկ կընեմ առ ժամայն  
եւ ամեն ինչ կը վերջանայ, ձեր փափաքա-  
նաց համաձայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովը գիտաւորու-  
թիւն չունի, Սրբազան Հայր, Վարչութեան  
գործոցը միջամուխ լինել, այլ իւր նպատակն  
է գիտողութիւն մ'ընել, փափաք մը յայտնել  
որ անարժան առաջնորդաց նկատմամբ Վար-  
չութիւնը պէտք եղածն ի գործ դնէ:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Կըմրոնեմ ձեր  
գիտողութեան նպատակը, չէք ուզեր Վար-  
չութեան գործերուն ուղղակի միջամտել, այլ  
կը գանդատիք, եւ Վարչութեանէն դարման կըս-  
պասէք, այսինքն զայն պատասխանատու  
ճանչնալ կուզէք:

ՓԱՓԱԶԱՆ Ս. ԷՖ. — Այո, վասն զի  
Վարչութիւնն է Գործադիր մարմինն, եւ ի-

րեն կը պատկանի պատասխանատուութիւնը:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Բայց ըսի ձեզ թէ  
Վարչութիւնն առաջնորդական խնդրոց մէջ  
կաշկանդեալ է Սահմանադրութեան 59րդ յօդ-  
ուածով, եւ չէ կարող դարման տանիլ անհովիւ  
եւ առաջնորդական վէճերով յարածուի գաւառ-  
ներու վիճակին: Եթէ միջամտութենէ կը խոր-  
չիք, դո՞նէ կրնաք Սահմանադրութեան այդ յօդ-  
ուածը վերաքննութեամբ բարեփոխել, եւ ար-  
տաքոյ կարգի պարագաներու համար Պատրիար-  
քին կամ Վարչութեան արտօնութիւն տալ ա-  
ռաջնորդի ընտրութիւնը կատարելու կամ դէժ  
կրնաք ասոր նման ուրիշ տնօրէնութիւն մ'ընել,  
պահելով դարձեալ նոյն յօդուածին տրամադ-  
րութիւնն այն գաւառաց համար, որ արժանա-  
պէս գիտեն օգտիլ անտի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բայց մեր Օրակար-  
գին մէջ չկայ այսպիսի խնդիր մը, ի՞նչպէս կա-  
րելի է ուրեմն, Սրբազան Հայր, որ ժողովը կա-  
րենայ զայն այսօր որոշել:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Երկու տարիէ  
հետէ Եգիպտոսի վիճակն առաջնորդական վէ-  
ճերով կը յուղուի, եւ դեռ հիմա հեռագիրն  
ինձ ծանոց որ այս պատճառաւ արիւնհեղու-  
թիւն տեղի ունեցեր է: Չկար այս դէպքը  
Վարչութեան օրակարգին մէջ, չկար Խառն  
ժողովոյ նիստ այս հեռագիրն եկած ատեն,  
չմոռնամ ըսելու որ Քաղ. ժողովէն ալ այս  
չարթու երեք անգամ միայն ներկայ գտնուե-  
ցան, բայց ես կրնայի՞ միթէ այսպիսի ծանր  
պարագայից մէջ անգործ կենալ եւ ժողով-  
ներուն գումարման սպասել, — ո՛չ, ուստի  
հեռագրեցի յԵգիպտոս որ առաջնորդն Պօլիս  
ուղեւորի: Ահաւասիկ, այսպիսի վիճակի մը  
մէջ են առաջնորդական խնդիրներն, եւ այս-  
պիսի փափուկ ժամանակի մէջ կը տեսնէք որ  
գործելու ազատութիւն սէտք է ունենայ Վար-  
չութիւնը:

ՁԱՅՆԵՐ. — Շատ աղէկ, շատ աղէկ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Այնպէս կը թուի ինձ որ Սրբազան Պատրիարքն Եգիպտոսէն հասած հեռագրէն զգածեալ՝ առաջնորդական ընտրութեանց վրայ այս առաջարկը կը բերէ ժողովին, եւ թերեւս պահ մ'ետեւ՝ Նորին Սրբազանութիւնը տարբեր կերպիւ պիտի գատէ իրերը, վասն զի իւր առջեւ պիտի գտնէ կեդրոնացման եւ տարակեդրոնացման խնդիրը: Սրբազան Պատրիարքն ինքն է որ նոյն իսկ այս երկրին փրկութիւնը տարակեդրոնացման դրութեան մէջ կը գտնէ, եւ զայն կը խնդրէ Տէրութիւններէն Հայաստանի կառավարական ձեւին համար: Կարելի է ուրեմն որ մեր ազգային ներքին գործոց համար կեդրոնացման դրութիւնն ընդգրկէ, այս միջոցիս մանաւանդ, ոչ: Նորին Սրբազանութիւնը ծանոյց թէ Եգիպտոսի առաջնորդը հոս կոչեր է հեռագրով, շատ ազէկ է ըրեր, որ գաւառին մէջ որ խռովութիւնք եւ անկարգութիւնք կը ծագին առաջնորդաց երեսէն, Արշութիւնն միշտ իրաւունք եւ արտօնութիւն ունի զանոնք հոս բերել տալու, պատասխանատու մնալով սակայն առ Ազգ. ժողովն, որ երբ իրաւունք տեսնէ, ինչ պիտի ըսէ ասոր համար:

Իսկ առաջնորդական ընտրութեանց գալով այս պարագային մէջ, ալ Արշութիւնը կրնայ հեղինակութիւն եւ ազդեցութիւն ունենալ նոյն իսկ ընտրելեաց ցանկին միջոցաւ, զոր կուզարկէ: Առաջնորդաց պաշտօնը կարեւոր է. ինչ որ է Պատրիարքը Պօլսոյ մէջ, նոյն է գրեթէ առաջնորդն գաւառին մէջ, անոր իշխանութեան իր մի մանրանկարը, ուստի կարծէ մեծ ուշադրութիւն նուիրել առաջնորդաց ընտրութեան, առաջնորդաց, որոց ընդարձակ վիճակներ, եւ ժողովրդոց բաղդը կը յանձնուին:

Երբ Արշութիւնն ընտրելեաց ցանկ զրկէ, ի բաց կրնայ թողուլ այն եկեղեցականներն որ թէեւ բարի բայց անքաղաքապէտ եւ անկարող են ժողովուրդը հովուելու, եւ ի յառաջդիմութեան մղելու. եւ կը նշանակէ միայն արժանաւորաց անուններն: Եւ որովհետեւ ցանկէն դուրս չէ կարող ռք ընտրուիլ, քուէն արժանաւորին կը հանդիպի,

որ ընտրելոյն ալ տրուած լինի: Այս գիտողութիւններն ընկելով՝ կը կարծեմ որ կանխահաս է առաջնորդաց ընտրութեան այս խնդիրն, եւ պէտք չկայ այժմ զայն հոս յուզելու:

Իսկ Երեմիա Եպիսկոպոսի խնդրոյն գալով՝ հրատարակային թերթեր շատ բաներ կրնան գրել իւր վրայ, եթէ ստուգուին: Սրբազան Պատրիարքը զինքը կարող է պաշտօնանկ ընել, բայց ասոր վրայ չէ հիմա խնդիրն: Ես հարցում բրձ երկու խնդրոյ վրայ, ստուգութիւնը չգիտեմ, եւ տեղեկութիւն կը խնդրեմ: Եթէ ճշմարիտ է ինչ որ կըսուի, ով որ է այն եկեղեցականն՝ որ վերջին պատերազմի ազէսներն եւ Ալաշկերտի արիւնոսուշտ կոտորածը հարստահարեալ մեր հէք ժողովրդեան մեղաց կը վերագրէ, եւ ապագայ չարեաց արհաւիրտ Աթօն մշտատեւ պահոց պատասպարտողը, ճգնաւորք են անասպատի, որ պաշտօն եւ գործ չեն կրնար ունենալ ընկերութեան մէջ, ուստի պէտք է ամեն պաշտօնէ մերկացնել զիրենք, եւ մենաստան մը զրկել, որ աղօթեն առանձնակեաց՝ ազգին փրկութեան համար:

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Սրբազան Պատրիարքն մեր վարչական դրութեան մի մեծ պակասն, մի մեծ թերութիւնն մասնացոյց կընէ մեզ, երբ մենք անոր հետեւանաց դարմանը գտնել կախատինք: Ստուգիւ մեր Սահմանադրութեան մէջ կեդրոնին, Ազգային իշխանութեան գլխոյն իրաւասութիւնն շատ սեղմեալ եւ սահմանափակ է, պէտք է որ Պատրիարքին իշխանութիւնն ընդլայնի, եւ Կեդրոնական Արշութեան գլուխն աւելի ազատութիւն ունենայ գործելու: Հոս կը ծագի կեդրոնացման եւ տարակեդրոնացման դրութեան խնդիր մը, ինչպէս յիշեց Փափազեան Էֆէնտին: Առարկեց նա՝ թէ ի՞նչպէս կրնանք մենք մեր ազգային Արշութեան ձեւին մէջ կեդրոնացումն ընդունիլ, մինչդեռ տարակեդրոնացում կը պահանջենք Հայաստանի համար: Բայց պէտք է գիտնալ որ մեր պահանջած տարակեդրոնացումն այլ է, եւ այս՝ այլ: Կեղուով, կրօնքով, ցեղով, բարքով, իրարմէ տարբեր ժողովուրդ-

ներ չեն կարող կառավարական միեւնոյն դրութեան ներքեւ խառն առաջնորդուիլ, իւրաքանչիւրին բնութեան եւ պիտոյից յարմար տեղական վարչութիւն մը հարկաւոր է անշուշտ այնպիսի գաւառներու համար՝ որ տարբեր տարրեր ցեղերու բնակավայրն են, բայց երբ խնդիրն՝ միեւնոյն ցեղին վրայ է, այն ատեն կը փոխուի, այն ատեն պէտք է նկատողութեան առնուլ ժողովրդեան զարգացման ստիճանն: Տարակեդրոնացման այն դրութիւնն, որով կը վարիմք ցարդ, ամեն գաւառ եւ ամեն թաղ՝ թողուլ իւր քմաց, իւր հաճոյից, յոյժ քնասարեր դրութիւն մ'է, եւ մեզի համար շատ աղիտաբեր եղած է: Առաջնորդաց ընտրութիւն, դպրոցներու տեսչութիւն, եւ այլն. ամեն ինչ յանձնուած է գաւառին կամաց, եւ սակայն ճիւղերն տղէտ են եւ իրենց շահերու մասին կոյր, նոյն իսկ կեդրոնին մէջ լուսամիտ եւ խորհող զլուխներն այնքան քիչ են, որ կրնան մատի վրայ հաշուիլ, ուր մնաց ճիւղերու մէջ: Ասոնք առաջնորդութեան եւ հսկողութեան պէտք ունին: Կը տեսնենք թէ ինչ եղած է արդիւնքն այն ցաւալի դրութեան, ամեն ուրեք՝ վէճ, պառակտում, անկարգութիւն, եւ ոչ գաւառ մը, եւ ոչ թաղ մը կրցեր է իրական յառաջդիմութիւն գոյացնել: Ասոր դարման՝ կեդրոնին՝ Կեդրոնական իշխանութեան գլխոյն իրաւասութեան ընդլայնումը պիտի լինի, բայց այս Սահմանադրութեան վերաքննութեան խնդիր է, որ արդէն Օրակարգին մէջն է, եւ երբ գայ կարգը, կրնայ վիճուիլ եւ պարզուիլ տակաւին: Առ այժմ, քանի որ դեռ հին օրէնքը կը տիրէ, Ս. Պատրիարքին առաջարկութիւնն հաշտեցնելու համար օրէնքին հետ, կառավարելով որ Ս. Պատրիարքն զԽրիմեան Սրբազան իբրեւ Պատրիարքական փոխանորդ զրկէ Աւան, մինչեւ որ ժողովները կազմուին, եւ այն ատեն, քանի որ գաւառին վստահութիւնն եւ համակրանքն Խրիմեանի վրայ է, ինչպէս կը լսեմք, անշուշտ քուէն զինքը կը գտնէ, եւ օրինաւոր առաջնորդ կընտրէ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Որքան բառ, այնքան սխալ կայ այս խօսքերուն մէջ, ժամա-

նակին պիտի հաստատեմ, եւ թերեւս համոզեմ զինքը:

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Շատ դիւրին պատասխան մ'է այս, բայց դժուար պիտի ըլլայ ձեզ հերքել խօսքերս:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրը տարածամիլ եւ վիճաբանութիւնը ճապարհիլ կսկսի. ամփոփեմք ուրեմն խնդիրն եւ վերջացնենք: Քիչ մ'առաջ զայն արդէն քուէարկելու կը պատրաստուէինք, երբ Սրբազան Պատրիարքն, արժանաւոր եւ կենցաղագէտ առաջնորդաց ընտրութեան դժուարութեանց վրայ խօսք բացաւ, եւ Սահմանադրութեան մէկ յօդուածին գործադրութեան հետեւանաց վրայ տեղեկութիւններ տուաւ, դարման առաջարկելով: Այս խնդիրն անշուշտ կարեւոր, բայց Սահմանադրութեան վերաքննութեան կը վերաբերի, եւ երբ կարգը գայ նկատառման նիւթ մ'է անշուշտ, բայց այս սլահուս՝ ոչ: Իսկ քուէարկելի խնդրոյն գալով՝ Սրբազան Պատրիարք Հօր բացատրութիւնները չփոխեցին անոր վիճակը, կարծիքները համաձայն են արդէն թէ Սրբազան Պատրիարքն ունի իշխանութիւն՝ նոյն իսկ Տէրութեան կողմէ յարուած՝ անարժան եւ պարտազանց առաջնորդներն սլաշտօնանկ ընելու. ուստի հարկ չկայ ինչ արտօնութիւն որ ունի ի վաղ ժամանակաց, նորէն տալու իրեն, այլ կը բաւէ որ Ազգ. ժողովն իւր ցաւն յայտնէ Երեմիա Եպիսկոպոսի բռնած ընթացից նրկատմամբ, եւ յանձնարարէ զայն եւ անոր նման առաջնորդաց նկատմամբ պարտուպատչածը տնօրինել:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Շատ ճշմարիտ է որ Սրբազան Պատրիարքն եւ Արշութիւնն իրաւունք ունին միշտ պաշտօնանկ ընել այն առաջնորդներն որ իրենց պարտաւորութեանց կը գրծեն, ուստի նոր արտօնութիւն տալու հարկ չկայ. իսկ առաջնորդական ընտրութեանց կէտին գալով՝ Սրբազան Պատրիարք Հօր յարուցած խնդիրը՝ կարծէ անշուշտ նկատողութեան առնուլ, բայց իբրեւ վերաքննութեան վերաբերող խնդիր՝ իւր կարգին. իսկ այժմ

կըմնայ յանձնել Վարչութեան որ թէ Երեմիա Եպիսկոպոսի եւ թէ այն ամէն առաջնորդաց նկատմամբ որ Սահմանադրութիւնը չեն դործադրեր, պէտք եղածն ի դործ դնէ, պաշտօնանկութիւն, ինչ որ հարկ է վերջապէս :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ո՛չ, ո՛չ, չենք կրնար այդ բանն արտասանել մենք, Վարչութեան իրաւասութեան վերաբերեալ է խնդիրն եւ անոր կը թողունք անօրինել զարժանն :

( Շշուկը )

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Թող դարձեալ Վարչութիւնը պաշտօնանկ ընէ զինքը, բայց ինչո՞ւ Ազգային ժողովը չկարենայ այս փափաքն յայտնել գէթ, անոր այսքան անարժան արարքները լսելէ ետեւ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Զը մոռնանք որ Երեմիա Եպիսկոպոսը դաւառէն ընտրուած չէ, այլ կեդրոնէն, եւ անոր բռնած ընթացից համար դաւառը մեղադրելու իրաւունք չունինք :

Տ. ՄԱՏԹԻՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ազգային ժողովն իւր ճիւղերն ունի, եւ եթէ ուղղակի ինք պիտի անօրինէ անոնց գործերն, ինչ բանի կը ծառայէ անոնց պաշտօնը :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Առաջնորդական ընտրութեանց վերաբերեալ յօդուածը վերաքննութեան կարօտ է եւ ստիպողական : Ուստի կառավարիկն այժմ ժողովիդ որ նոյն յօդուածը վերաքննել եւ բարեփոխել հաճի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շնորհ ըրէք, Սրբազան Հայր, գրով ներկայել ձեր առաջարկը ժողովին, եթէ ստիպողական կը նկատէք, եւ ժողովը յղելով զայն իւր նախաքննիչ զիւանին՝ առանց սպասելու վերաքննութեան ժամանակին, նկատողութեան կառնու :

Տ. ՄԱՏԹԻՍ ԵՊԻՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Վարչութեան կողմէ երբ օրինաց վերաքննութեան նկատմամբ առաջարկ մը ներկայանայ, պէտք

է որ ջնջելի արամադրութեան տեղ անցնելիք բարեփոխումն ի միասին մատուցուի, ուստի կը խնդրենք որ Սրբազան Պատրիարքը շնորհ ընէ ներկայել նաեւ իւր արժան դատած բարեփոխումն, առանց որոյ՝ կրնայ շատ ժամանակ երկարել վերաքննութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այո՛, այդ կերպով աւելի կը դիւրանայ գործը, եթէ Սրբազան Պատրիարքը հաճի ի միասին ներկայացնել հարկ դատած բարեփոխումը : Այս խնդիրը վերջացած է առ այժմ, եւ հիմայ միւս խնդիրը քուէի պիտի դնեմ սա ձեւով թէ՛ Ազգ. ժողովն ցաւ յայտնելով Երեմիա Եպիսկոպոսի եւ այն առաջնորդաց համար որ իրենց հակասահմանադրական ընթացքով ազգին յառաջադիմութեան արգել եւ խափան կը լինին, եւ իրենց հովուական պարտաւորութեան դէմ կը մեղանշեն, Ազգ. Վարչութեան կը յանձնարարէ որ իւր ունեցած իշխանութեամբ՝ անոնց նկատմամբ պարտաւորապէս ի դործ դնէ :

ԶԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛ :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին այս բանաձեւով քուէի կը դնէ խնդիրը, եւ ժողովն մեծագոյն մասամբ՝ ըստ բացատրութեան Ատենապետ էֆէնտիի՝ ցաւ յայտնելով Երեմիա Եպիսկոպոսի ընթացից եւ ազգին յառաջադիմութեան արգելք եղող եւ պարտադանց առաջնորդաց համար՝ կը ՅԱՆԶՆԱՐԱՐԷ Ազգ. Վարչութեան իւր իշխանութեամբ ի դործ դնել անոնց նկատմամբ զոր ինչ արժան է :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ես այդ ձեւին դէմ կը բողոքեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովը մեծագոյն մասամբ իւր որոշումը տուաւ, եւ դուք իրաւունք չունիք, Փափազեան էֆէնտի, անոր որոշման դէմ բողոք բռնալու : Արդ կը դոցենք այս միջադէպը՝ յղելով նաեւ Փափազեան էֆէնտիի հարցումը կրօնական ժողովոյ՝ ի պատասխանատուութիւն :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Արդեօք նո՞ր խնդիր քուէարկուեցաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ո՛չ, նոր խնդիր չը քուէարկուեցաւ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Այդ յայտարարութիւնը բաւական է ինձ :

9.

Երեսուդեմայ պարտուց խնդրոյն Ե. Պատրիարքարանի ցրուեալ վիճակին վրայ Սրբազան Պատրիարք Հօր կրկին առաջարկը

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Երկու կարեւոր խնդիր կը ներկայացնեմ ժողովիդ, եւ կը խնդրեմ որ հաճիք ուշադրութեան առնուլ զայնս Մին՝ Երուսաղէմայ պարտուց կը վերաբերի, եւ միւսը Պատրիարքարանի ցանուցի վիճակին վրայ է : Երուսաղէմ ամենուս սիրելի սրբավայր մ'է, եւ գրեթէ ազգային յարկին խօսարանն, ուր ամէն երկրէ մեր ազգայինք կուգան կը հաղորդակցին ընդ իրեարս Գիտէք արդէն թէ ինչ կարօտ վիճակի մէջ ինկած է Ս. Յակոբայ վանքն, Երուսաղէմայ պատրիարքն անձնուրաց եւ աշխատասէր անձ մ'է, բայց ժամանակին անձուկ վիճակը, եւ քիչ մ'ալ թերեւս մատակարարութեան շտապութիւնը՝ մեծաքանակ պարտքի ներքեւ թողած են վանքը : Այս վիճակին դարմանն ստիպողական է, եւ հետեւանքը դառն, եթէ չփութանք ձեռն կարկառել օգնութեան : Ուստի մտածեցի՝ առանց պաշտօնական արարողութեանց սպասելու՝ լիազօր յանձնախումբ մը կազմել, որ պաշտօն ունենայ թէ այս պարտքը բառնալու միջոցները անօրինել եւ գործադրել, եւ թէ վանուց մատակարարութիւնը բարւոք եւ անտեսադիտական դրութեան մը մէջ մտցնել, եւ ապահովել վանուց բարեկարգութիւնն եւ ապագայ վիճակն Այս Յանձնաժողովոյ անդամներ նշանակեցի, որոց վրայ ազգը մեծ համարում ունի, եւ Երուսաղէմայ Միաբանութիւնը քաջ

կը ճանչէ զանոնք, ուստի տարակոյս չկայ որ կարենան իրենց պաշտօնն արդիւնաւորել : Արդ՝ կը խնդրեմ ժողովէդ որ այս անօրէնութիւնը հաճի հաստատել, որպէս զի իւր որոշմամբ գործադրեմ զայն :

Երկրորդ խնդիրն՝ ինչպէս ըսի, Պատրիարքարանի ցանուցի վիճակին վրայ է՝ որ ուշադրութեան արժանի եղած է : Ժողովներուն մէկ մասը Ղալաթիա, միւս մասը Պատրիարքարան, Գիւանատունը այս պատճառաւ շարժուն վիճակի մէջ, այսօր Տնտեսական խորհուրդը, վաղիւ Ուսումնականը, միւս օր ուրիշ խորհուրդ մը նիստ ունին ի Ղալաթիա, որոնց ետեւէն զիւանադպիրները կը յաճին կը դեպերին յարատեւ իրենց թղթերով, Պատրիարքարանը գրագիր մը կը փնտռես, Ղալաթիա է կըսեն, Ղալաթիոյ մէջ թուղթ մը կը փնտռես, Պատրիարքարանն է, կըսեն, այս վիճակն անկարգութեանց պատճառ, անհանդուրժելի եւ ազգին արժանապատուութեանն անվայել : Վերջապէս պէտք է այս վիճակին վերջ մը տալ, պէտք է որ այսուհետեւ՝ Ազգային ժողովն սկսելով ամենքն ալ ամիոփ ի մի վայր գումարուին եւ գործեն, այսինքն հոն ուր որ է ազգին Պատրիարքարանն, ուր կըրնան գանուիլ պէտք եղած բոլոր թղթերն, առենադրութիւններն եւ զիւանադպիրներն, որ ժողովոց աշխատութիւններն աւարտելէ ետեւ կրնան զիւանական ուրիշ գործոց պարապել, եւ վերջապէս՝ ազգային ժողովներն, Ազգ. իշխանութիւնն կը ներկայանան՝ ազգին պաշտօնատան մէջ, իրենց արժանապատուութեան վայել զիրքով, եւ ոչ թէ այսպէս թափառիկ եւ ցանուցի վիճակի մէջ : Իսկ եթէ Պատրիարքարանի հեռաւորութիւնը դժուարին կը թուի յարաբերութեանց համար, եւ կուղէք երթեւեկի զիւրութիւն վայելել, այն ատեն դարձեալ տեղ մը պէտք է պատրաստել, ուր ամիոփ գտնուին ամենքն : Ասոնք են իմ առաջարկութիւններս, զորս բերանացի յայտնելէ ետեւ՝ ահաւասիկ գրով ալ կը մատուցանեմ ձեզ :

Եւ Ամեն Սրբազան Պատրիարքը յետագայ կրկին գրերը յանձնեց Գիւանին :

Վսեմափայլ Ատենապետ փաշա  
Ազգային ժողովոյ

Ս. Երուսաղէմի վիճակը կը պարտաւորէ զմեզ ընդ փոյթ լուծում մը տալ պարտուց՝ և ապագային բարւոք մատակարարութեամբ այլ ևս պարտուց մէջ չլինալու խնդրոյն :

Ուստի լաւ կը համարիմ եթէ ժողովը հաճի՝ իրազօր յանձնաժողով մը կազմել սոյն անձերէն ,

Սէրվիլէն Էֆէնտի

Կիւլպէնկեան Մ. Սերովբե Էֆէնտի

Նորատունկեան Մ. Յակոբ Էֆէնտի

Սենեքերիմ Էֆէնտի

Ժողովը արտօնէ սոյն յանձնաժողովը բանակցելու , կարգադրելու , որոշելու , վճարելու , կանոնադրելու , ապահովելու ամեն ինչ որ Ս. Երուսաղէմայ պարտուց կարգադրութեան՝ և այլ ևս պարտքի տակ չլինալու կարգադրութեանց կը վերաբերին :

Պ. Կ.

Ներսես Արքեպիսկոպոս

1879 Օգոստոս 25

՚ի Պատրիարքարանի Հայոց

Վսեմափայլ Ատենապետ փաշա  
Ազգային ժողովոյ

Պատրիարքարանի ցիրուցան վիճակը Պատրիարքական արժանապատուութեան այսինքն ազգին պատուոյն անվայելու է , մէյմը Պօլիս՝ մէյմը Ղալաթիա ժողով գու-

մարել թէ ծախուց թէ ժամանակի ընդ-վայր փառնումն ըսել է :

Պէտք է որ ժողովները մէկ տեղ մը՝ այսինքն՝ ուր որ է ազգին՝ Պատրիարքարանը հոն գումարուին , եթէ առարկուի թէ Պատրիարքարանը հեռի է Հայոց բնակած թաղերէն և գժուարութիւններ կայ յարաբերութեանց մասին ( որ ճշմարիտ է ) , պէտք է ուրեմն Պատրիարքարանը փոխադրել յարմար տեղ մը :

Պ. Կ.

Ներսես Արքեպիսկոպոս

1879 Օգոստոս 25

՚ի Պատրիարքարանի Հայոց

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՖ. — Սրբազան Պատրիարքն Երուսաղէմայ վանուց վիճակը կը նկարագրէ , և անոր պարտուց խնդիրը ժողովիս անօրէնութեան կը ներկայացնէ : Սակայն այս խնդիրն Ազգային ժողովին չվերաբերիր , որ օրէնսդիր մարմին մ'է , այլ Վարչութեան , որու գործակցութեամբ Սրբազան Պատրիարքը կը անօրինէ , ինչ որ արժան կը դատի : Ուստի չեմ կարծեր որ այս խնդիրն Ազգային ժողովոյ անօրէնութեան կարօտի :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Քօլօլեան էֆէնտին սկզբածր իրաւունք ունի , բայց կարծեմ թէ ուշադրութիւն չընծայեց Սրբազան Պատրիարք Հօր առաջարկութեան որ ընդհանուր հանգանակութեան կէտ մը կը պարունակէ , որու համար անշուշտ Սրբազան Պատրիարքն ստիպուած է Ազգային ժողովին տրանօրէնութեան ներկայացնել խնդիրը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ճշմարիտ է այս զիտողութիւնը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Երուսաղէմայ խնդիրը վանական խնդիր մ'է , և իբր այն Վանօրէից խորհրդոյ քննութեան բովէն անցնելէ ետեւ՝ անոր տեղեկագրով կուգայ հոռ

Քաղ. ժողովին կողմէ , որ եթէ իւր ձեռնհասութենէն վեր դանկ պէտք եղած անօրէնութիւնն ընել , կը դիմէ Ազգ. ժողովոյ հեղինակութեան :

Տ. ՅՈՎ. Հ. ՔՀՆՅ. ՄԿԻՆԱՆ. — Վանօրէից խորհուրդն աւարտած է իւր քննութիւնն և քիչ օրէն սիտի ներկայէ իւր տեղեկագիրը :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Սրբազան պատրիարքն այսօր ցոյց կուտայ մեզ այն թերութիւններն , որք Ազգային գործոց ընթացքը կը գժուարացնեն : Ազգային խորհրդոց աստանդական գումարումն . Վարչական այս ցիրուցան կացութիւնն անշուշտ մեծ արգելք և գժուարութիւններ են , բայց ընթացիկ և կարեւոր գործոց խորհուրդներու յանձնուիլն է զլխաւոր պատճառ :

Այս խորհուրդները կազմող անձերն , որք իրենց անձնական և ամենօրեայ զբաղումներն ունին , չեն կրնար հեռուներն երթալ գումարուիլ , և հարկաւ կուզեն գոնէ կեդրոնական տեղ մը ժողովիլ , որ մօտ ըլլայ ամենուն գործատեղոյն , և ահա ասոր համար Ղալաթիա եղած է տեղի գումարման : Երբ այդ իւրաքանչիւր ձիւղի վերաբերող ընթացիկ գործերը կարգադրելու համար ունենանք առանձին պաշտօնեայներ , օրինակի համար մի Ելմտական պաշտօնեայ , մի Դաստիարակութեան պաշտօնեայ , Վանօրէից և Տնտեսական գործոց պաշտօնեայ , այն ատեն այդ մարդիկ կերթան ուր որ պէտք է երթալ , որովհետեւ իրենց գործատեղին կերթան , բայց այս վիճակին մէջ խորհուրդներէն արդիւնք սպասելն ընդունայն է : Ուստի Երուսաղէմայ պարտուց խնդրոյն մասին ալ հարկ չեմ դատեր Վանօրէից խորհրդէն սպասել խնդրոյն լուծումն , անօգուտ ժամալաճառութիւն մ'ընել կըլլար այս , այլ պէտք է ընդունել Սրբազան պատրիարք Հօր առաջարկած յատուկ Յանձնաժողովն , քանի որ խնդիրն ստիպողական է , և Սանձնադրութեան վերաքննութեան մէջ քննել խորհուրդներուն կազմութեան կէտը :

ՄԷՐԵԼԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Տարակոյս չը կայ թէ մեր Սանձնադրութեան մէջ այնպիսի կէտեր կան , որ մեր ազգին պիտոյքները որ ժամանակին հետ փոխուած են անշուշտ , կատարելապէս գոհացնելու չեն ծառայեր , տարակոյս չկայ թէ ընդհանուր համոզում մը գոյացած է այլ եւս՝ որ եթէ մեր Վարչութիւնը ուրիշ եղանակաւ կազմուած լինէր աւելի մեծ գործեր կրնար տեսնել , և կերելի թէ հասած է ժամն , այսպիսի նորոգ կարգադրութիւն մ'ընելու , բայց եթէ Սրբազան Պատրիարքն Երուսաղէմայ խնդիրը հոս կը բերէ , պատճառն այն չէ որ յուսահատած լինի Խորհուրդներէն կամ ժողովներէն , ինչպէս կարծուեցաւ և ձրի զրպարտութիւն մ'է ըսել , թէ մեր Վարչութեան խորհուրդներէն գործ սպասելն անօգուտ է : Ժողովին մեծամասնութիւնն այսպիսի կարծիք մը չընդունիր :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — ( Ընդմիջելով ) Ես անձերն չեմ ամբաստաներ , այլ զրութիւնը :

ՄԷՐԵԼԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — ( Շարունակելով ) Երուսաղէմայ պարտուց խնդիրն որ Խորհրդին որ կը վերաբերի , քաջ ուսումնասիրած է , և ես Սրբազան Պատրիարքին առաջարկէն այնպէս կըմտնեմ թէ՛ գժուարութիւնն հոն է որ գումար մը հայթայթել պէտք եղած է պարտուց վճարման համար , որու համար Սրբազան Պատրիարքը Յանձնաժողով մը կառաջարկէ :

Այս տեսակէտէն դիտելով խնդիրն հարկ չմնար պնդելու թէ անպատճառ Վարչութեան կը վերաբերի՝ զայն անօրինել , և թէ անոր դարձնել պէտք է , այլ կրնանք զայն նկատողութեան առնուլ , և ներկայացնալ ցանկին վրայ մեր դիտողութիւնն ընել , և ելք տալ խնդրոյն : Այս մասին այսքան , իսկ Պատրիարքարանի ցանուցիր վիճակին վրայ վերջը կը յայտնեմ կարծիքս :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Շատ ցաւալի է Երուսաղէմայ վանուց վիճակը , 30000 ոսկի պարտք զիղեր է , գումար մը՝ որ Հայաստանը կրնար վրկել :

Այս խնդրոյն մանրամասնութեանցը չեմ մտնել, չգիտեմ ով է յանցաւորն, միայն ցաւ կը յայտնեմ այս վիճակին համար. ահազին քանակութեամբ պարտք մը կը ծանրանայ ազգին վրայ, մենք պզտի գումարներ հայթայթելու համար մեծ նեղութիւն կը կրենք եւ այժմ Ազգը մեծաքանակ պարտք մը պիտի ստիպուի հատուցանել:

Այժմ քանի որ Ս. Պատրիարքը հոս բերած է խնդիրն, ըսել է Ազգային ժողովին հաղորդելու հարկ զգացել է, մանաւանդ որ հանգանակութեան խնդիր կայ, ուստի յանձնարարենք Սրբազան պատրիարք Հօր որ պէտք եղածն ի գործ դնէ, Վարչութեան հետ տնօրինելով զարժանն:

ԶԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

Հետեւագլխս Ատենայեալ է ֆէնտին քուէի կը դնէ խնդիրն, եւ ժողովը միաձայն ըստ առաջարկութեան Փափագեան էֆէնտի կը յանձնէ Սրբազան պատրիարք Հօր որ երուսազէմայ պարտուց խնդրոյն նկատմամբ ինչ որ հարկ է անօրինէ եւ գործադրէ Ազգ. Վարչութեան հետ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սրբազան Պատրիարք Հօր առաջարկութեանց մին, այն է երուսազէմայ պարտուց խնդիրն իւր լուծումն ընդունեց, կը մնայ այժմ Պատրիարքարանի ցըրուեալ վիճակին նկատմամբ ըրած առաջարկն, որու վրայ կը հրաւիրեմ ժողովն իւր կարծիքը յայտնելու:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Այս մասին Սրբազան Պատրիարք Հօր յարուցած խնդիրն շատ իրաւացի է, Վարչութեան մը համար չը կրնար այսպիսի ցանուցիր վիճակ մ'երեւակայուիլ: Չեմ կարծեր որ այսպիսի վիճակի մէջ նաեւ Գիււանատունն ալ ասպանութեան ներքեւ գոնուած լինի, տուժարներն եւ թղթերն ամեն օր տեղէ տեղ փոխադրուելով ոչ միայն մեծ անպատեհութիւններ այլ եւ կորուստներ իսկ կրնան պատահիլ: Բայց եթէ բոլոր

ժողովներն եւ Խորհուրդներն ուղեւք Պատրիարքարանի մէջ ամիտիւ, ասկէ ալ մեծ դժուարութիւնք պիտի ծագին յարաբերութեանց եւ երթեւեկութեանց համար, ուստի լաւագոյն է Յանձնախումբ մ'ընտրել որ քննէ թէ կարելի է արդեօք ժողովները Պատրիարքարանն կամ ուրիշ տեղ մը փոխադրել, եւ թէ ինչ միջոցներով եւ եղանակաւ:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Ես այսօր Ձեր սիրոյն համար եկայ, բայց ուրիշ անգամ չեմ կարող գալ հոս, զիտցած ըլլաք այժմէն:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Մերէմ-Գուլի էֆէնտին Պատրիարքարանի մէջ գումարուելուն դժուարութիւնը յիշեց, եւ շատ իրաւացի է ըսածը, բայց մենք երբ Սրբազան Հօրմէն գոհողութիւնն խնդրեցիք, մեզի ալ հարկ է գոհողութեամբ շարժիլ, ուստի պէտք է երթանք Պատրիարքարանը նիստ ընելու համար:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Իմ առաջարկութիւնս Սրբազան Պատրիարք Հօր առաջարկին չը հակառակիր, այլ զայն կընդգրկէ բոլորովին: Նորին Սրբազանութիւնն այս ցըրուած վիճակին վերջ տալու մտօք կառաջարկէ կամ Պատրիարքարանն գումարուիլ, եւ կամ եթէ՛ այս դժուարին է, ուրիշ յարմար վայր մը փոխադրուիլ, բայց ամիտի մնալով: Իսկ ես ըսի թէ Պատրիարքարանի երթեւեկը դժուար է, ուստի առաջարկեցի որ Յանձնաժողով մը կազմուի որպէս զի խորհի թէ կարելի է Պատրիարքարանը կամ ժողովները փոխադրել այլուր, իսկ մինչեւ որ Յանձնախումբն իւր աշխատութիւնն աւարտէ, որու համար կըրնայ մէկ ամիս պայմանաժամ Էստանբուլ, կրնան ժողովներն միահամուռ ըստ առաջարկութեան Սրբազան Պատրիարք Հօր փոխադրուիլ ի Պատրիարքարան:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Այո, մինչեւ որ այս խնդիրն որոշուի, պէտք է Պատրիարքարանի մէջ կատարել գումարումներն,

եւ այս է կարծեմ Սրբազան Պատրիարք Հօր փափաքը:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Այս խնդրոյն մէջ իմ կարծիքս այն է թէ քանի որ առ այժմ Գում-Գարուի Պատրիարքարանն գումարուելու յարմար տեղ մը չկայ պաշտօնական գործառնութեանց եւ գումարմանց համար, պէտք է որ հոն ամիտի տեղի ունենան գումարումներն եւ գործողութիւններն:

Կը տեսնէք որ Յունաց պատրիարքարանն ալ Ֆէնէրի մէջ հաստատուած է երկար տարիէ ի վեր, որ թէեւ մերինն նման կեդրոնական տեղ մը չէ, բայց չեն տեղափոխեր, եւ երթեւեկի դժուարութիւնն յանձն առնելով՝ կը պահեն իրենց Ֆէնէրի պատրիարքարանն: Ուստի մենք ալ մեր Պատրիարքարանն իւր տեղը պահելու ենք, որ քանի մը հարիւր տարիներէ ի վեր Գում-Գարուի մէջ հաստատուած է:

ՔԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ես կը յիշեմ որ չորս տարի առաջ ալ այս խնդիրն յուզուած է, եւ կարծեմ Մայր դիւանն առաջարկութիւն մ'ալ բերած է Ղալաթիոյ մէջ Ազգային ժողովոյ համար խորհրդարան մը, չէնք մը հիմնելու մտօք, բայց ոչ թէ Պատրիարքի բընակութեան, այլ գումարմանց եւ պաշտօնական գործառնութեանց համար, բայց այս ալ դրամի խնդիր մ'է պարզապէս. ուստի երբ Սրբազան Պատրիարքը խնդիրն այս վիճակին մէջ հոս բերէ, մենք չենք կարող բան մ'ընել իբր դրամի խնդիր:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Դուք ինչ կրնաք ընել ուրեմն:

ՔԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Երուսազէմայ երեսուն հազար ոսկոյ պարտուց համար առաջարկութիւն մը բերիք, Սրբազան Հօյր, չնորհրէք երկու հազար ոսկոյ առաջարկ մ'ալ այս խնդրոյն համար ներկայացնել, կամ եթէ Կեդրոնական սնտուկը դրամ կայ, վարկ մ'ուզել, զոր ժողովը կարծեմ չը մերժեր քուէարկել, ասկէ անդին ժողովը ինչ կրնայ ընել, ուրիշ խնդիր է որ մեր մէջէն անոնք որ կարողութիւն եւ յօժարութիւն ունին, կրնան գումար մը նուր

րել այս ծախուց համար: Պատրիարքարանն ազգին գործոց պաշտօնական տեղին է, եւ այս մասին ինչ որ հարկ է ընել Ձեր Սրբազանութիւնը պէտք է մտածէ:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ազգն իւր Պատրիարքարանն ունի, բայց եթէ չէք ուզեր հոն գալ, ուրիշ տեղ մը պատրաստեցէք, վասն զի այս վիճակն Ազգին արժանապատուութեանը չը վայելի:

Շատ անգամ օտարազգի հիւրեր այցելութեան կուգան ինձ, եւ զիս չեն գտներ Պատրիարքարանի մէջ, վասն զի այսօր Ազգային ժողովոյ, վաղը Կրօնականին, միւս օր Քաղաքականին, ուրիշ օր մը Խառն ժողովոյ գումարմանց համար կը պարտաւորիմ Ղալաթիա գալ, եւ այցելուք երբեմն մինչեւ հոս գալով կը հարկադրիմ զիրենք անյարմար տեղեր, խցիկներու մէջ ընդունիլ: Բայց ես որ չեմ կրնար Պատրիարքարան մնալ, պիտի կենամ, ուստի դուք ալ եկէք որ այս անպատեհութիւնք վերջ գտնեն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սրբազան Պատրիարքը կառաջարկէ որ բոլոր ժողովները Պատրիարքարանն գումարուին իրենց գործակից ճիւղերով, սակայն չընդդիմանար եթէ ուզէք ուրիշ յարմար վայր մը փոխադրել, կը բաւէ որ Պատրիարքարանը ամիտի մէկ տեղ մը հաստատուած ըլլայ, եւ սա ցանուցիր վիճակը վերջանայ:

(Սրբազան Պատրիարքն այս 'պահուս կը մեկնի Խորհրդարանէն)

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Քուէի դէք Սրբազան Պատրիարքին առաջարկութիւնը:

ԷՍԱԵԱՆ Մ. ԷՖ. — Ես կառաջարկեմ որ Ազգային ժողովն մնալով առ այժմ հոս, միւս ժողովներն եւ Վարչութեան բովանդակ ճիւղերն գումարուին ի Պատրիարքարան:

Միւս կողմէ ըստ առաջարկութեան Մէրեւէմ-Գուլի էֆէնտի Յանձնախումբ մը կրնայ դրուիլ, որ քննէ, եւ տեղեկագրէ մեզ, թէ

կարելի է արդեօք Պատրիարքարանը այլուր փոխադրել եւ այնուհետեւ այս խնդրոյն վրայ վերջնական տնօրէնութիւն մը կընենք :

ՁԱՅՆԵՐ . — Քուէ , քուէ :

ԲԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կանոնադրական դիտողութիւն ունիմ , երբ քուէ առաջարկուի կանոն է կանխաւ վիճաբանութիւնը փակել , եւ այնուհետեւ խնդիրը քուէի զընել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պարտք կը համարիմ յայտնելու որ այս խնդիրն այդ տեսակէն չէ , Սրբազան Պատրիարքը յայտարարեց որ եթէ ժողովը հոս դումարուի , ինք չէ կարող գալ :

ԲԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ալ պարտք կը համարիմ յայտարարելու թէ դիտողութիւնս այդպիսի մեկնութիւն մը չվերցըներ եւ թէ առաջարկութիւնները կարգաւ քուէի կը դրուին :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Կը համաձայնիմ Մէրեէմ-Գուլի Էֆէնտիի եւ կառաջարկեմ որ ընդունինք առ այժմ ժողովոց ի Պատրիարքարան գումարումն , մինչեւ որ կազմելի Յանձնախումբն իւր տեղեկագիրը բերէ մեզ : Սըրբազան Պատրիարքէն խնդրեց ժողովս իւր անձը զոհել ազգին համար , եւ մենք ալ , կարծեմ , պէտք չէ որ քիչ մը հեռուն երթալու դժուարութեան առջեւ յետս ընկրկինք :

ԷՍԱԵԱՆ Մ. ԷՖ. — Եթէ ժողովը վարչութեան ժողովոց եւ Խորհրդոց Պատրիարքարան գումարումն որոշէ , միայն Ազգային ժողովն ի բաց առնելով , ես կը խոստանամ Սրբազան Պատրիարք Հօր հաճութիւնն ստանալ այս տնօրէնութեան համար :

ՄԷՐԵՆԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ես ամենեւին տարբերութիւն մը չեմ տեսներ այն առաջարկութեանց մէջ , որ իմինիս յաջորդեցին : Ես կըսեմ թէ Մասնախումբ մը զենք , որպէս զի քննէ թէ կարելի է արդեօք ուրիշ տեղ մը փոխադրուիլ , թէ ոչ Պատրիարքարանի մէջ

հաստատուիլ պէտք է : Սրբազան Պատրիարքն եթէ այս ցիրուցան վիճակն անպատեհ կը համարի , ես մինչեւ իսկ փոստագաւոր կը զըտնեմ Պատրիարքարանի դիւանատան արձանագրութեանց եւ դրութեանց համար , որոնք շարունակ տեղէ տեղ փոխադրուելով կրնան կորսուիլ : Ուստի զենք այդ Մասնախումբը մինչեւ մէկ ամիս իւր աշխատութեան արդիւնքը տեղեկագրելու պայմանաւ , եւ մենք ալ խօսք տանք Սրբազան Պատրիարք Հօր համակերպիլ իւր առաջարկութեան , եւ բոլոր ժողովոց եւ Խորհրդոց հետ՝ նաեւ Ազգային ժողովն ալ ի Պատրիարքարան փոխադրել , մինչեւ որ Մասնախումբն բերէ իւր տեղեկագիրը :

ՁԱՅՆԵՐ . — Քուէ , քուէ :

Հետեւապէս Ատենապետ Էֆէնտին խընդիրը քուէի կը դնէ , եւ ժողովը միաձայն ԿՈՐՈՇԷ ըստ առաջարկութեան Մէրեէմ-Գուլի Էֆէնտիի Յանձնախումբ մը կազմել , որպէս զի Պատրիարքարանի փոխադրութեան խնդիրը քննէ , եւ մինչեւ մէկ ամիս արդիւնքը տեղեկագրէ , այն պայմանաւ որ վարչութեան ժողովներն եւ ճիւղերն ի Պատրիարքարան գումարումն , ինչպէս նաեւ Ազգային ժողովն , ցաւարտ աշխատութեան Յանձնախումբին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը մնայ հիմայ յանձնախումբը կազմել : Ազգ. ժողովն իւր մէջ մնայուն Ելմտական յանձնախումբ մ'ունի արդէն , եթէ պատշաճ կը համարիք կրնայ այդ պաշտօնն նոյն Յանձնախումբին յանձնուիլ , աւոր վրայ քանի մ'անդամ եւս յաւելնալով :

ՄԷՐԵՆԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Շատ աղէկ : Կառաջարկեմ ուրեմն որ Յանձնախումբին վրայ յաւելնայ նախ Էսաեան Էֆէնտին , որ խօսք տուաւ Սրբազան Պատրիարք Հօր ընդունել տալ Ազգ. ժողովոյ Ղալաթիոյ մէջ գումարումը , եւ երկրորդ՝ Փափաղեան Էֆէնտին , որ այս փոխադրութեան խնդրոյն պատմութիւնը զիտէ :

Ժողովը ԿՐ ՀԱՒԱՆԻ այս առաջարկութեան եւ Ելմտական Յանձնախումբին վրայ յաւելցնե-

լով Էսաեան եւ Փափաղեան Էֆէնտիները , սոյն Յանձնախումբին կը յանձնէ Պատրիարքարանի տեղափոխութեան խնդրոյն քննութիւնը կատարել :

10.

Նախաձեռնութեան դիւանի տեղեկագրերը

ՄԷՐԵՆԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ազգ. ժողովոյ ներկայ բացմանէն ի վեր երեք խնդիր յուղարկուած է Նախաձեռնութեան դիւանին . մին Արչակունի Յովհաննէս Էֆէնտիի երեսփոխանական ընտրութեան խնդիրը , երկրորդը՝ Կարսայ եւ Բուսնուխի վիճակաց երեսփոխանական ընտրութեանց մասնակցութեան խընդիրը , եւ երրորդը՝ Թիւլպէնտեան Էֆէնտիի երեսփոխանական ընտրութեան խնդիրը : Նախաձեռնութեան դիւանի անդամք , ուրիշ

Ազգային խնդիրներով բազմազբաղ էին , եւ այս պատճառաւ չկրցին ցարդ այս խնդրոց նախաքննութիւնը կատարել . այսօր ահա առաջին երկու խնդրոց տեղեկագրերը կը բերեմ , կը մնայ երրորդն՝ այն է Թիւլպէնտեան Էֆէնտիի բողոքը , անոր ալ տեղեկագրին յառաջիկայ նիստին :

Այս առթիւ Ատենապետ Էֆէնտին յայտարարեց թէ Յարաբերութեան դիւանէն ալ տեղեկագիր մ'եկած է Տիգրանակերտի դադարեալ առաջնորդ Տ. Փիլիպպոս եպիսկոպոսի խնդրոյն վրայ , հետեւաբար ժողովն ՈՐՈՇԵՑ որ սոյն երեք տեղեկագրերն ալ Օրակարգն անցնին :

Ատենապետը գոցուեցաւ ժամ 10 ին :

Ատենապետը Գեր-Ատենապետ  
Մ. Յ. ՄԷԼԻՔԵԱՆ Տ. ԵՈՒՍՈՒՅԵԱՆ

ԿՐԿԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆԻ

Վսեմափայլ Ատենապետ փաշա

Ազգային ժողովոյ :

Հիսար եւ Պոյաճը-Գիւղի միացեալ թաղից կողմանէ նորընտիր երեսփոխան Արչակունի Յովհաննէս Էֆէնտիի ընտրութեան տեղեկագիրը ներկայ բացման Ա.

նիստին մէջ դիտողութեանց ենթարկուելով , Պատկաւելի ժողովդ իւր Նախաձեռնութեան դիւանին յղած է զայն ի նախաքննութիւն :

Նախաձեռնութեան դիւանը քննեց եւ տեսաւ որ յիշեալ դիտողութիւնք հետեւեալ չորս կէտերէ բաղկացեալ են ,

Ա. Ընտրեալն օրինական տարիքը չէ լրացուցած :

Բ. Օսմանեան տէրութեան հպատակ չեղող անձն մասնակցած է ընտրութեան :

Գ. Քուէարկուաց մէջ այնպիսի ոք գտնուած է, որ միանգամայն երկու թաղի ընտրութեանց համար քուէ տուած է :

Դ. Քուէարկուաց ամէնքը տարեկան առ նուազն 73 զուրուշ ազդային տուրք վճարելու կարող չեն, և 23 զուրուշնոցներ ալ գտնուած են անոնց մէջ :

Այս չորս կէտերուն առաջինն ընտրելոյն Սահմանադրական հանգամանաց կը վերաբերի, իսկ միւս երեքն ընտրութեան օրինաւորութեանը :

Եւ եթէ Յ. Արշակունի էֆէնտին ըստուգապէս չունենար այն տարիքը, զոր կը տրամադրէ Ազդային Սահմանադրութեան 68 ըդ. յօդուածն, իբրև պայման ընտրելութեան, միւս երեք կէտերուն քննութեանն իսկ մասնելու հարկ չպիտի տեսնէր Զեր գիւանը. վասն զի ընտրութիւնն ինքնին կը բեկանէր ընտրելոյն օրինական հանգամանաց թերութեամբ :

Բայց ըստ որում վարչութիւնն իւր ծանօթագրին մէջ յիշեալ ընտրելոյն համար ալ կըսէ թէ՛ Սահմանադրական հանգամանքն ստուգելը (յորս է և տարիքի խնդիրն) և Սահմանադրութեան 67 և 68 ըդ. յօդուածոց համաձայն գտեր է, և ըստ որում այս մասին յարուցեալ խընդիլը պարզ յայտարարութենէ մ'անդին չէ անցած և Ազդ. վարչութեան ծանօթագիրը ջրելու բաւական չէ դարձած, կարելի չէր տարիքի մասին օրինական թերութեան ենթակայ նկատել զԱրշակունի էֆէնտին. ուստի հարկ եղաւ ընտրու-

թեան օրինաւորութեանը վերաբերող միւս երեք կէտերուն քննութեանը մտնել :

Հետևաբար նախաձեռնութեան դիւանը նախ յիշեալ դիտողութիւններն ընող երեսփոխանին՝ Տէր Ներսէս վարդապետ Ասլանեանին՝ գիմեց, որ և բնակիչ է Պոյաճը դիւղի, և բացատրութիւն տուաւ թէ՛ Օսմանեան հպատակ չեղող երկու անձինք մասնակցեր են ընտրութեան, և մի անձ ալ՝ որ ուրիշ թաղի մը մէջ իւր ընտրական իրաւունքն ի գործ դրած է եղեր արդէն, սոյն ընտրութեան համար ալ քուէ տուեր է :

Տ. Ներսէս վարդապետ աւելցուց նաև թէ՛ յատենի ժողովոյդ ըրած դիտողութեամբ՝ նպատակ ունեցած չէ երէք ընտրութիւնը բեկանելու խնդիր յարուցանել, այլ միայն դիտել տալ ուզած է թէ՛ Ընտրողական ժողովներն ստէպ անփոյթ են օրինաց տրամադրութիւնքն յարգելու և զանոնք ճշգիւ գործագրելու :

Տ. Ներսէս վարդապետ զայս յայտարարելու համար խօսք առնուլ ուզեր էր նոյն օրը, բայց ինչպէս կերևի ատենագրութեան մէջ, յերևս 22, ժողովդ փիճաբանութեան փակումը քուէարկելով առիթ չէր թողուցեր նմա իւր դիտաւորութիւնը յատենի անդ բացատրելու :

Միւս կողմէ Պոյաճի դիւղի Ընտրողական ժողովոյ ատենապետը կը մերժէր վերոյիշեալ դիտողութիւնքը և կը պնդէր թէ ընտրութիւնն ամենայն օրինաւորութեամբ կատարուած է :

Հետևաբար այս երկու կէտերուն նկատմամբ ստուգութիւնն յերևան ածելու համար, հարկ կը լինէր հակասողները դէմ առ դէմ բերելով՝ քննութիւնն յառաջ տանիլ :

Բայց ըստ որում Տ. Ներսէս վարդապետ մասնաւոր պատճառներով, որք բանաւոր ալ կը թուին, տրամադրութիւն չունի այս մասին խնդիր յուղելու, ըստ որում խնդրոյ նիւթ եղած ընտրութիւնն 71 քուէարկուաց 48 ին քուէովը կատարուած լինելով, եթէ ստոյգ ալ լինէին վերոյիշեալ երկու դիտողութիւնք, ընդ ամենը երեք քուէներու խնդիր մը պիտի ներկայացնէին, որոնք՝ ընտրելոյն ստացած 48 քուէից թիւէն զեղչուած ատեն՝ ընտրութեան արդիւնքը չէին փոփոխեր, զի քուէները 43 կը մնային, որք 71 ի մեծագոյն մասէն միշտ աւելի են, Զեր Նախաձեռնութեան դիւանը՝ սոյն պարագայից մէջ՝ պատշաճագոյն կարծեց աւելի յառաջ չերթալ և դիտողութեանց չորրորդ կէտը նկատողութեան առաւ :

Այս կէտն է երեսփոխանական ընտրութեանց մասնակցողներուն տարեկան 73 զրշ. տուրք վճարելու պայմանը :

Սահմանադրական տրամադրութիւն մ'է այս արդարև, զոր կարելի չէ անտես առնել : Եւ ինչպէս դիտէք օրինաց այս կէտն ի սկզբանէ անտի, կրնամք ըսել, ամբողջ երեսփոխանութեան տհաճութեանը հանդիպած է. և ամեն անգամ որ այս մասին խնդիր յուղուած է ժողովոյս մէջ, խնդրէն աւելի երեսփոխանք յուղուած են : Այս փիճակին դարման բերելու համար անշուշտ՝ որոշուած է յանցելումն, տարեկան առ նուազն 73 զուրուշ վճարողները չփնտռել երեսփոխանական ընտրութեանց համար, այլ նոյն գումարը տալու կարողութիւն ունեցողները :

Այսպէս եղած է գրեթէ մեր բոլոր երեսփոխանական ընտրութեանց մէջ. և երբ 1877 ի ընտրութեանց առթիւ վար-

չութիւնն իսկ իւր ծանօթագրով դիտողութիւն ըրած է թէ՛ քուէարկուաց 73 զուրուշ վճարելու կարողութիւնը կատարածի տակ է, և թէ ինք զայն ստուգելու պէտք ունի, ժողովդ չէ ուզած կարևորութիւն տալ և ընտրութիւնները վաւերած է, դիտելով թէ՛ վարչութեան պարտքն է՝ երեսփոխանական ընտրողաց ցանկն ունենալ և ըստ այնմ ընտրութեանց օրինաւորութիւնն ստուգել և ծանօթագրել ժողովիս :

Վարչութիւնն անտարակոյս Թաղխորհրդոց ձեռօք պատրաստել կուտայ և կատանայ ընտրողաց ցանկերն, և ըստ սոյնմ տուրք կը պահանջէ քուէարկութեան :

Ներկայ խնդիրն ալ Հիսարու և Պոյաճը դիւղի Թաղխորհուրդներուն գործակցութեամբ կատարուած գործողութիւն մ'ըլլալով, արոց մասին վարչութեան անկ եղածն է՝ ընտրութեան մասնակցողաց ցանկերն առնուլ յիշեալ Թաղխորհուրդներէն, և ըստ այնմ տուրք պահանջել անոնց մէջ նշանակեալներէն :

Արդ՝ նկատելով որ վարչութիւնն ընտրելոյն Սահմանադրական հանգամանքն անթերի գտած է և հակառակն հաստատող ազդեցոյց մը մէջ չէ բերուած,

Նկատելով որ Օսմանեան հպատակ չեղող և երկու թաղերու մէջ միանգամայն ընտրական իրաւունք ի գործ դնող անձանց սոյն ընտրութեան մասնակցած լինելուն վրայ պնդող և զայն ապացուցանող չկայ,

Նկատելով մանաւանդ՝ որ եթէ այնպիսի զեղծում մ'ապացուցեալ իսկ լինէր, յիշեալ կարգէն ենթադրեալ երեք անձանց քուէներն անբաւական պիտի մնային քուէարկութեան արդիւնքը փոխելու,



Նկատելով վերջապէս՝ որ արդարացի չլինիր սոյն ընտրութիւնը քուէարկողներուն տարեկան առնուադն 73 զուրուշ ազգային տուրք վճարելու կարողութիւնն այժմէն ժխտել, և այս խնդիրն այն ատեն միայն կրնայ ճշդիւ պարզուիլ, երբ ի դէպ ժամու վարչութիւնն անոնց ազգային տուրքերը մի առ մի պահանջէ, ինչպէս որ իւր պարտքն է, ըստ տիրող օրինաց,

Նկատելով դարձեալ որ ժողովոյս ազգային տրոցնոր կանոնագիր քուէարկած միջոցին, կարողութեան աստիճանի խնդիրը նախօրդ անդամներէն տարբեր տեսակէտով և աւելի մանրազննին կերպիւ յուզել շատ բանաւոր չը լինիր, և մանաւանդ գրեթէ ընդհանուր երեսփոխանաց դժգոհութիւնն ի նորոյ գրգռելու առիթ կընծայէ, որոյ պատճառն յայտնի է,

Չեր նախաձեռնութեան դիւանը կեղքակայէ Արշակունի Յովհաննէս էֆէնտի ընտրութիւնը վաւերել ժողովոյ գրութիւնը:

Ատենապետ եւ Տեղեկաբեր

Յ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ

Մ. 20ՊԱՆԵԱՆ Մ. ՌԱՅԱՅԷԼԵԱՆ

24 Օգոստոս 1879

Վսեմափայլ Ատենապետ փաշա

Ազգային ժողովոյ

Նախաձեռնութեան դիւանն ի քննի առաւ Ազգային երեսփոխանաց բաշխման ցանկին նկատմամբ՝ կարսայ և Բուսճուզի վիճակաց համար վարչութեան ը-

րած տնօրինութեան տեղեկագիրն, որ առ ինքն յղեալ էր ժողովէդ:

Կարսայ վիճակին ցանկէն սրբուիլն և անոր տեղ Բարեբրդի և Երզնկայու միացեալ վիճակաց իրարմէ զատուելով երկաքանչիւրոյն առանձինն մէկ մէկ երեսփոխան ընտրելու իրաւունք տրուիլն՝ որ և է բանաւոր առարկութեան ենթակայ չգտնելու նախաձեռնութեան դիւանը: Վասն զի վերջին աշխարհագրական փոփոխութիւնը կարսայ վիճակի երեսփոխանին գործակցութենէն ցաւ ի սիրտ զրկուիլ կը հարկադրեն զմեզ, և Բարեբրդի ու Երզնկայու բազմահայ վիճակաց կարեւորութիւնն ալ նախապատուութիւն կընծայէ սոցա բնապէս՝ այս առթիւ ուրոյն երեսփոխաններ ընտրելու առաւելութիւնը վայելելու:

Բուսճուզի վիճակին դալով, զայն բաշխման ցանկին մէջ պահելու մասին թեր ու դէմ կարծիքներ յայտնուած էին ժողովոյդ մէջ, զորս ի նկատի առաւ Չեր նախաձեռնութեան դիւանն, և դիտեց թէ՛ Բուսճուզի վիճակն, որչափ որ այսուհետեւ ինքնօրէն իշխանութեան մը կը պատկանի, և իբր այն՝ կրնայ դժուարութեանց տեղի տալ զայն մեր ազգային իշխանութեան ենթարկեալ պահելու, այսու ամենայնիւ ո՛չ Օսմանեան կայսրութենէն բացարձակապէս անջատեալ կարելի է համարիլ զայդ վիճակը, քաղաքական տեսակէտով, և ո՛չ ալ իրաւացի է՝ Բուսճուզի և անոր շրջակայից մեր համագրի եղբայրները դուրս ձգել ազգային կազմակերպութեան շրջանակէն, առանց նոցա տրամադրութիւնն ի հաշիւ առնելու:

Հետեւաբար՝ ըստ որում պատճառ մը չկայ ենթադրելու թէ՛ յիշեալ վիճա-

կին մեր ազգայինը նախընտիր համարին մենէ անջատ մնալ և ինքնովին ազգային իշխանութիւն մը կազմել. ըստ որում առանց պարտաւորիչ հարկի՝ Բուսճուզի Հայերն այս երեսփոխանական ժողովին մասնակցութենէն զրկելու ձեռնարկը կրնայ տխուր տպաւորութիւն մ'ընել նոցա վերայ, և ըստ որում՝ որ և է վիճակի մենէ անջատումն ազգային միութեան և զօրութեան հարուած մ'է վերջապէս:

Նախաձեռնութեան դիւանը կեղքակայէ վաւերել Ազգային վարչութեան տնօրինութիւնն և արտօնել զնա,

1. Կարսայ վիճակն Ազգային երեսփոխանաց բաշխման ցանկէն սրբելով՝ անոր տեղ Բարեբրդի և Երզնկայի միացեալ վիճակներն իրարմէ զատելու,

2. Բուսճուզի վիճակն ըստ առաջնոյն բաշխման ցանկին մէջ պահելով, իւր երեսփոխանն ընտրել և ժողովոյս զրկել հրաւիրելու:

Ատենապետ և Տեղեկաբեր

Յ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ

Մ. 20ՊԱՆԵԱՆ Մ. ՌԱՅԱՅԷԼԵԱՆ

24 Օգոստոս 1879

Ղալաթիա

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՆԻ

Վսեմափայլ Ատենապետ էֆէնտի

Յարաբերութեան դիւանս պատիւունեցաւ Տիգրանակերտի դադարեալ առաջնորդ Գեր. Փիլիպպոս Եպիսկոպոսի բողոքագիրը նախաքննելու, զոր լ'նդհ. ժողովոյ դիւանն իրեն յղած էր:

Դիւանս կը փութայ այս մասին իւր կարծիքը ներկայելու:

Գեր. Փիլիպպոս Սրբազանի բողոքագրոյ մէջ գլխաւոր կէտ մը մոռցուած կե-

րելի, այն է Տիգրանակերտի ողբալի խըռովութիւնները, որք մինչև հեռաւոր երկիրներ տխուր արձագանք տուին: Եթէ Ազգ. վարչութիւնն առանց բանաւոր պատճառի և քմահաճ կերպիւ հեռացուցած ըլլար զԳեր. Փիլիպպոս Սրբազան իւր վիճակէն, տարակոյս չկար որ այս վերջինն իրաւունք կունենար անոր դէմ բողոքելու, բայց քանի որ իւր ի Տիգրանակերտ ներկայութիւնը միշտ երկպառակութեան և մինչև իսկ ծանր կռիւ-

ներու պատճառ կուտար, Ազգային վարչութիւնը ծանր պատասխանատուութեան ենթակայ կը լինէր՝ եթէ այս խնդրոյն մէջ անհոգ և կամ մեղկ ընթացք մը բռնելով ազգու միջոց մը ձեռք չառնէր, խռովութեանց առաջնն առնելու: Հետևաբար դիւանս կը կարծէ թէ վարչութիւնն օրինաւորութենէ շեղած չէ, մանաւանդ որ Սահմանադրութիւնը չպարունակեր այնպիսի տրամադրութիւն մը, որով Առաջնորդը անխփօխելի լինին եթէ նոյն իսկ իրենց վրայ խռովութիւն ծագի: Գեր. Փիլիպպոս Սրբազան կրնայ սակայն իւր ընթացից վրայ քննութիւն

պահանջել, ազգին առջև ինքզինք արդարացնելու համար:

Ընդհ. Ժողովը պէտք է միայն խնդրոյն այս մասը նկատողութեան առնելով Տիգրանակերտի գործերն և անոնց պատճառները քննէ, Մասնախումբի մը ձեռք:

Մնամք Ձեր վսեմութեան անձնուէր

Տեղեկաբեր Ատենապետ  
Պ. ՊԱՌՆԱՍԵԱՆ Մ. ԷՍԱՆԱՆ  
Բ. ՀԱԼԱՃԵԱՆ

24 Օգոստոս 1879  
Կ. Պոլիս

ՅՈՒՑԱԿ ՏՊԱՐԱԿԱՆ ՎՐԻՊԱԿԱՅ

ՆԱԽՈՐԴ Ը. ՆԻՍՏԻ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

Երեւ	Միւնակ	Տ՝	ՍԻԱԼ	ՈՒՂԻՂ
187	Բ.	17	առաջարկեցին	առարկեցին
187	Բ.	33	նշանակածին	նշանակուածին
188	Բ.	2	ղատ	ղուտ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Տ.	Մկրտիչ	Ս.	Արքեպս.	Խրիմեան	Ա. Արեւուդէր
2	Տ.	Խորէն	Ս.	»	Նար-պէյ	
3	Տ.	Կարապետ	Ս.	Եպս.	Սերոբէան	
4	Տ.	Մատթէոս	Ս.	»	Խղմիրլեան	Բ. Արեւուդէր
5	Տ.	Ամբրոսիոս	Մ.	Վրդ.	Ռուբինեան	
6	Տ.	Գարեգին	Մ.	»	Թաթարեան	
7	Տ.	Եղնիկ	Մ.	»	Ապահունի (Առաջ. պաշտօնիւ գուրս	
8	Տ.	Իզնատիոս	Մ.	»	Շիշլեան	գացած)
9	Տ.	Հմայեակ	Մ.	»	Գիմարեան	
10	Տ.	Ներսէս	Մ.	»	Ասլանեան	
11	Տ.	Պօղոս	Մ.	»	Խօլտամեան	
12	Տ.	Արիստակէս	Ս.	Առաջ. Քհնյ.	Մամբրէեան	
13	Տ.	Խորէն	»	»	Փէհլիվանեան	Բ. Արեւուդէր
14	Տ.	Սահակ	»	»	Տ. Մարդխանեան	Ա. Արեւուդէր

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Առաքել	Էֆէնտի	Ալթուն	Տիւրքի	Ա. Արեւուդէր
2	Գէորգ	»	Ստիմարաճեան		Ա. Արեւուդէր
3	Գէորգ	»	Գլլըճեան		
4	Գարբիէլ	»	Եսայեան		
5	Լօղօֆէթ	»	Պալեօղեան		
6	Աբել	»	Կիւլպէնկեան		(Հրաժարեալ)
7	Մարտիրոս	»	Միւհէնտիսեան		
8	Մկրտիչ	»	Յրէնկեան		
9	Յակոբ	»	Չօպանեան		
10	Ղազարոս	»	Հօլուեան		(Հրաժարեալ)
11	Սահակ	»	Ղազարոսեան		
12	Յակոբ	»	Մերունեան		(Հրաժարեալ)
13	Ստեփան	»	Պէյլիկեան		Բ. Արեւուդէր
14	Խաչատուր	Խան	Տ. Ներսիսեան		

Գին 2 որոշ

ՍԵՓԷԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԴԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՅ ՅՍՏԿԱՅԵԱԼ

---

Կը ծախուի ի Գիւանատան Պատրիարքարանի Է. Ղալաբիոյ Ս. Լուսաւորիչ  
Եկեղեցւոյ բանկայը Է. Հայ գրականասաց բով